«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»

(Եբր. 13:8):

Շրջաբերական նամակ

Հոկտեմբեր 2013

«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր. 13:8):

Շրջաբերական նամակ

Հոկտեմբեր 2013

Սրտանց ողջունում եմ բոլորիդ սուրբգրային այս հատվածով. *«Խոտը կչորանա, ծաղիկը կթառամի, բայց մեր Աստծո խոսքը կմնա հավիտյան* (Եսայի 40:8): *Սա այն խոսքն է, որ ձեզ ավետարանվեց»* (1Պետր.1:24,25):

Իսրայելի և հեթանոսների Եկեղեցու համար Աստծո փրկագնման ծրագրում կարևոր տեղ ունեն բոլոր խոստումների իրականացումը և Հին ու Նոր Կտակարանների միջև կատարյալ ներդաշնակությունը: Հեսուն վկայեց. *«Ոչ մի բան չպակասեց այն ամեն բարի բաներից, որ Եհովան Իսրայելի տան համար խոսել էր, բոլորը կատարվեց»* (Հեսու 21:45): Կատարելության ժամանակ մենք կարող ենք նույնն ասել (Հռոմ. 8:30):

Ճշմարիտ հավատքը խարսխված է միայն Աստծո խոստումների վրա: Աբրահամը հավատաց Աստծո խոստումին (Ծննդոց 18) և տեսավ դրա իրականացումը (Հռոմ. 4:17, Գաղատ. 3:8): Պայմանը սա էր՝ *«... որ իր որդիներին և իրենից հետո իր տանը պատվիրի, և նրանք Եհովայի ճանապարհը պահեն, արդարություն և իրավունք անելու համար, որպեսզի Եհովան Աբրահամի վրա բերի ինչ որ ասել է նրան»* (Ծննդոց 18:19): Խոստումները կապված են հավատքի հետ, իսկ հնազանդությունը տանում է իրականացմանը: Եթե Խոսքում որևէ թեմայի վերաբերյալ խոստում չկա, իրականացում էլ չի կարող լինել:

Աստծո Խոսքի և Հոգու միջոցով անձամբ Աստծո կողմից կանչվածներիս և այս ժամանակաշրջանի համար տրված խոստումներին հավատացողներիս է ուղղված այն երդումը, որն Աստված Աբրահամին տվեց Ծննդոց 22:15-19 համարներում. *«Որովհետև երբ Աստված Աբրահամին խոստում տվեց, քանի որ չկար ավելի մեծը, որով երդվեր, Իր անձի վրա երդվեց, ասելով. «Հիրավի, օրհնելով պիտի օրհնեմ քեզ և բազմացնելով պիտի բազմացնեմ քեզ»*: Աստված Իր վրա վերցրեց խոստման իրականացման պատասխանատվությունը: *«Ահա թե ինչու Աստված, կամենալով խոստման որդիներին առավել ևս ցույց տալ Իր խորհրդի անփոփոխ լինելը՝ այն երդմամբ հաստատեց. որպեսզի երկու անփոփոխելի բաներով, որոնցով անկարելի է, որ Աստված ստի, մենք հաստատուն մխիթարություն ունենանք, մենք, որ ապաստանի համար մեր առջև դրված հույսից*

կառչեցինք» (Եբր. 6:13-18): Աստված ճշմարիտ է, Նա Իր խորհրդի անփոփոխությունը հաստատեց երդումով և մեզ մեկընդմիշտ հասկացրեց, որ Ինքը հսկում է Իր Խոսքի վրա և ամեն բան իրականացնում:

Հավատացյալների համար ճշմարիտ օրհնությունը կապված է խոստումների, հավատքի և հնազանդության հետ, ինչպես Աբրահամի դեպքում էր, և ոչ ոք չի կարող առանց հավատքի և հնազանդության Աստծուն հաճելի լինել (Եբր. 11:6): *«Տեսնու՞մ ես, որ հավատքը գործի հետ մեկտեղ էր ու այդ գործերով էր, որ հավատքը կատարյալ եղավ»* (Հակոբ 2:22): Խոսքի խոստումներին հավատալով՝ մենք առանձնաշնորհում ունենք հաղորդ լինելու աստվածային բնությանը, և այդպես մեր մեջ Աստծո զորությամբ կդրսևորվեն այն յոթ թվարկված առաքինությունները, որոնք պարունակվում են Աստծո սիրո մեջ (2 Պետրոս 1:3-11): Միայն կատարյալ սերը կմտնի այնտեղ (1 Կորնթ. 13): *«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք միմյանց սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ նույնպես միմյանց սիրեք»* (Հովհ. 13:34): *«Սերը դրացուն չարիք չի պատճառում: Հետևաբար, սերը Օրենքի լրումն է»* (Հռոմ. 13:10):

Ճշմարիտ հավատացյալները հավատում են աստվածաշնչյան ձևով՝ Սուրբ Գրքի համաձայն, ջրով մկրտվում են աստվածաշնչյան ձևով՝ մեկ անգամ ընկղմվելով Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ *«Եվ երբ լսեցին, Տեր Հիսուսի անունով մկրտվեցին»*: (Գործք 2L38, 39, Գործք 19:5, 6), և Հոգով մկրտվում են աստվածաշնչյան ձևով. *«Որովհետև մենք ամենքս էլ մեկ Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին լինելու համար. թե հրեաներ, թե հույներ, թե ծառաներ, թե ազատներ. ամենքս էլ մեկ Հոգուց խմեցինք»* (Ա Կորնթ. 12:13): Այդպես է եղել Եկեղեցու սկզբում, այդպես է լինելու նաև վերջում: Միայն Խոսքի խոստումներին հավատալով իսկապես կճաշակենք դրանք: Միայն այդպես կլինենք խոստումի զավակներ (Գաղատ. 4:28):

Դա վերաբերում է նաև խոստացված Սուրբ Հոգով կնքվելուն (Եփես. 1:13), որն անհրաժեշտ պայման է Քրիստոսի վերադարձի ժամանակ մեր մարմնի փրկագնման համար: Պողոսը գրել է. *«Եվ եթե Հիսուսին մեռելներից <u>հարություն տվողի Հոգին բնակվում է ձեր մեջ</u>, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի Իր Հոգով, որ բնակվում է ձեր մեջ»* (Հռոմ.8:11):

Հոգով մկրտվածներ և օծվածներ շատ կան, հատկապես հոգեգալստական շարժման մեջ, որոնք ուշադրություն չեն դարձնում, թե ինչին են հավատում, ինչ են սովորեցնում և կիրառում, նույնիսկ շատ սուտ մարգարեներ և սուտ քրիստոսներ կան (Մատթ. 7:21-24, Մատթ. 24): Քրիստոսի մեջ հաստատված ճշմարիտ հավատացյալների համար այս բոլորը՝ խոստումները, օծությունը և Աստծո կնիքը կապված են իրար հետ: *«Որովհետև որքան Աստծո խոստումներ որ կան, նրա մեջ է «այո»-ն, նրանում է «ամեն»-ը. Աստծո փառքի համար մեզանով: <u>Բայց մեզ ձեզ հետ</u>*

հաստատողը և մեզ օծողը Աստուած է, որ մեզ կնքեց էլ ու Հոգու գրավը մեր սրտերի մեջ դրեց» (2 Կորնթ.1:20-22):

Պողոս առաքյալը անդրադառնում է այս կարևոր թեմային և Խոսքի քարոզչությունը՝ Ճշմարտության Խոսքի քարոզչությունը հակադրում է սուտ վարդապետություններին (2 Տիմ. 2:15-18): Դրան հետևում է ճշմարիտ Եկեղեցու բնութագիրը. *«Սակայն Աստծո հաստատուն հիմքը կանգնած է, ունենալով այս կնիքը՝ «Տերը ճանաչում է նրանց, որ Իրենն են»: Եվ Քրիստոսի անունը կանչողը թող հեռանա անիրավությունից»* (հ.19):

Կենդանի Աստծո Եկեղեցին ստի տուն չէ: Պողոսը գրել է. *«Իսկ եթե ուշանամ, պետք է իմանաս, թե ինչպես պետք է վարվես Աստծո տան մեջ, որ կենդանի Աստծո եկեղեցին է, ճշմարտության սյունը և հաստատությունը»* (1 Տիմ. 3:15): Չնայած բոլոր եկեղեցիներում և քրիստոնեական խմբերում գոյություն ունեցող սուտ վարդապետություններին՝ Աստված այնուամենայնիվ կառուցում է Իր Եկեղեցին, որն ընդմիշտ մնում է ճշմարտության սյունը և հաստատությունը ու կրում է Աստծո կնիքը (1 Տիմ. 3:15): Այո, Տերը ճանաչում է Իրեն պատկանողներին, և Իրեն պատկանողներն էլ Նրան են ճանաչում: Այսօր էլ ուժի մեջ է մնում Նրա ասածը. *«Ես կկառուցեմ Իմ Եկեղեցին»*:

Հոգևոր անձրևը թափվում է ամեն մարմնի վրա (Եբր. 6:7,8,) բայց ամեն բան կախված է ցանված սերմից: *«Սերունդը ծառայելու է նրան..»* (Սաղմ. 22:30): Բրանհամ եղբայրն ասում էր. «Դուք կարող եք Հոգով մկրտված լինել երկրորդ ոլորտում և ունենալ Հոգու պարգևները, բայց ձեր անձում վերստին ծնված չլինել»: *«Ամեն ոք ով Աստծուց է ծնված, մեղք չի գործում, քանի որ Նրա սերմը մնում է իր մեջ, և նա չի կարող մեղք գործել, քանի որ ծնվել է Աստծուց»* (1 Հովհ. 3:9): Դրա համար կնիք ստանալու վերաբերյալ պետք է շեշտը դնել Խոսքի սերմի վրա: *«Սերմը Աստծո Խոսքն է»* (Ղուկաս 8:11): Աստծո Հոգու՝ Ճշմարտության Հոգու (Հովհ. 15:26) կնիքը կարող ենք ստանալ միայն այն դեպքում, եթե գիտակցաբար ընդունենք Ճշմարտության Խոսքը, հավատանք դրան և հայտնություն ստանանք: *«Նրանով դուք էլ հուսացիք, երբ ճշմարտության Խոսքը լսեցիք՝ ձեր փրկության Ավետարանը, որին էլ երբ հավատացիք, խոստացված Սուրբ Հոգով կնքվեցիք»* (Եփես.1:13): Աստծո Հոգով կնքվել հնարավոր չէ, եթե վատ սերմ է ցանված մեկնության միջոցով և եթե հավատում են սուտ վարդապետության:

Միայն Խոսքի աստվածային հայտնությունն է կնքվելու ճշմարիտ հավատացյալների մեջ: *«Կապիր վկայությունը, կնքիր օրենքը իմ աշակերտների մեջ»* (Ես.8:16): Մի ուսմունք, որի վկայությունը չկա Աստվածաշնչում, չի կարող լինել սուրբգրային: Աստվածային հեղինակությամբ Հովհաննես առաքյալը գրում է, որ ոչ մի ստություն ճշմարտությունից չէ (1Հովհ: 2:21): Եդեմի պարտեզից սկսած՝ սուտը ճշմարտության աղավա-

ղումն է, որը գալիս է սատանայից: Ճշմարիտ է միայն Աստված, ով միայն Իր Խոսքի մեջ է, մինչդեռ ամեն մարդ սուտ է (Հռոմ. 3:4):

Հովհաննեսը գրում է Քրիստոսի խոստացված վերադարձի վերաբերյալ. *«Եվ այժմ, որդյակներ, մնացեք Նրա մեջ, որ երբ Նա հայտնվի, մենք համարձակություն ունենանք, և Նրա գալու պահին Նրա առջև չամաչենք»* (1 Հովհ.2:28):

Տիրոջ կողմից հանձնարարություն ստացած լինելով՝ առաքյալը առանց փոխզիջման հասնում է այս կետին. *«Սիրելինե՛ր, ամեն հոգու մի՛ հավատացեք, այլ փորձեք հոգիները, թե արդյոք Աստծու՞ց են, որովհետև շատ սուտ մարգարեներ են աշխարհ դուրս եկել»*: Այնուհետև ընդգրկում է բոլոր նրանց, ովքեր հավատացել են իր վկայությանը. *«Դուք Աստծուց եք, որդյակներ, և հաղթեցիք նրանց, որովհետև Նա, որ ձեր մեջ է, ավելի մեծ է, քան նա, որ աշխարհի մեջ է»*: Վկայակոչելով քարոզչությունը՝ գրում է. *«Մենք Աստծուց ենք: Նա, ով ճանաչում է Աստծուն, մեզ է լսում, նա, ով Աստծուց չէ, չի լսում մեզ: Այսպիսով ենք ճանաչում Ճշմարտության Հոգին և խաբեության հոգին»* (1 Հովհ.4: 1-6): Սա պարզ լեզու է, սա ինքն իրեն ներկայացնել չի, այլ Աստծո կողմից ուղարկվածի մարտահրավեր է: Նույնը վերաբերում է այսօրվան, եթե Աստծո կողմից կոչում է եղել: Աստծո կողմից ուղարկվածը քարոզում և սովորեցնում է միայն այն, ինչ Խոսքն է ասում, ու բոլոր նրանք, ովքեր ծնվել են Խոսք-Սերմից և Հոգուց, լսում են Աստծո Խոսքը:

ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. *«Աստծուց եղողն Աստծո Խոսքերը լսում է. դուք նրա համար չեք ականջ դնում, որ Աստծուց չեք»* (Հովհ.8:47): Այդպես էր նախկինում, այդպես է նաև հիմա: Կա միշտ երկու խումբ՝ ոմանք ընդունում էին, մյուսները՝ մերժում:

Հովհաննեսի այս վկայությունը վերաբերում էր նաև Պողոսին, ու Բրանհամ եղբորն էլ: Միայն Աստծուց եղողները լսեցին, հավատացին և ընդունեցին դա: Դա վերաբերում է նաև ինձ և բոլոր նրանց, ովքեր այս ժամանակաշրջանում պատկանում են Հարս-Եկեղեցուն: Երկուսն էլ միշտ կան՝ նախ գալիս է բարի սերմը ցանողը, հետո՝ որոմ ցանողը (Մատթ. 13: 24-41): Երկուսն էլ գոյություն ունեն՝ Խոսքը և մեկնությունը, Ճշմարտության Հոգին և մոլորության հոգին, մինչդեռ երբեք նույն աղբյուրից քաղցր և դառը ջուր չի բխի, և երբեք տատասկը թուզ չի տա (Հակոբ 3:11,12): Սա հաստատ է՝ երբ Աստված ուղարկում է մեկին, վստահ է, որ նա կհռչակի միայն Խոսքը, որը Պետրոսի վկայության համաձայն, մնում է հավիտյան (1 Պետր. 1:25): Նա, ով չի հարգում Խոսքի ճշմարտությունը և չի ընդունում Խոսքի վավերականությունը, դատապարտված է ընդունելու ուժեղ մոլորություն՝ մոլորության հոգու ազդեցության տակ (2 Թես. 2:10-12):

Պողոսը գրում է՝ դիմելով ճշմարիտ հավատացյալներին. *«Իսկ մենք ամեն ժամանակ պարտավոր ենք Աստծուն շնորհակալ լինել ձեզ համար, Տիրոջից սիրված եղբայրներ, որովհետև Աստված փրկության համար*

սկզբից ձեզ ընտրեց Հոգու սրբացմամբ ու ճշմարտության հավատով» (2 Թես. 2:13): Դրանում է երևում Հարս-Եկեղեցուն պատկանողների, Աստծո Գառան Արյամբ գնվածների (Եփես. 1:7), ճշմարտության Խոսքով սրբացածների (Հովհ. 17:17) ճշմարիտ նախասահմանությունը: Միայն նա, ով Աստծո Խոսքի մեջ է, կարող է լինել Աստծո կամքի մեջ: *«Թող Քո կամքը լինի»: «Որովհետև այն կամքով մենք սրբվեցինք Հիսուս Քրիստոսի մարմնի մեկ անգամ զոհվելով» (Եբր.10:10)*:

«...նորից կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ» (Հովհ. 14:1-3):

Քրիստոսի վերադարձը և այն ամենը ինչ կատարվում է այդ իրադարձության ժամանակ, շատ մանրամասն նկարագրված է Աստվածաշնչի բազմաթիվ հատվածներում: Դա առաքյալների, ինչպես նաև Բրանհամ եղբոր գլխավոր թեման էր: Դա մի թեմա է, որի վերաբերյալ մենք էլ բազմիցս գրել ենք: Դժբախտաբար, այդ թեմայի վերաբերյալ Բրանհամ եղբոր ասած որոշ խոսքեր, հատկապես «Հափշտակություն» քարոզից, հանվել են իրենց համատեքստից, այսպես կոչված «պատգամի քարոզիչների» կողմից և ճիշտ չեն դասավորվել Աստվածաշնչի համաձայն: Դա մեծ խառնաշփոթություն է առաջացրել «պատգամի ներսում»: Շատ քաղաքներում տարբեր խմբեր են ձևավորվել այդ առանձնահատուկ, հակասուրբգրային վարդապետությունների հիման վրա: Մինդեռ ցանկացած վարդապետություն, որը հիմնված չէ դրա վերաբերյալ սուրբգրային հատվածների վրա, կարող է լինել միայն սուտ ուսմունք: Աստված իրոք միայն Իր Խոսքի մեջ է, և ոչ թե որևէ մեկնության մեջ: Մեկնություններում թաքնվում է թշնամին, մոլորեցնողը, որը կեղծավորությամբ գործում է մոլորության հոգու միջոցով:

Մարգարեն իր քարոզներում հարյուրավոր անգամներ շեշտեց, որ դրախտում սատանան *միայն մեկ բառ* ավելացրեց այն խոսքին, որն Աստված ասել էր Ադամին: Այդպես նրան հաջողվեց Եվայի մեջ կասկած սերմանել Աստծո Խոսքի վերաբերյալ, որ նրան տանի անհավատության մեղքի մեջ, հետո մեղքի մեջ անկման՝ թե հոգևորապես, թե մարմնավորապես: Պողոսը վախենում էր, որ սատանան նույնը կաներ այն հավատացյալների հետ, որոնք հավատարմությամբ չէին կառչում Աստծո Խոսքից (2 Կորնթ. 11): Մինչդեռ ընտրյալները չեն կարող մոլորվել, նրանք նախասահմանված են (Հռոմ. 8:38,39): Նա, ով պատկանում է Հիսուս Քրիստոսի Հարս-Եկեղեցուն, հավատում է Աստծո յուրաքանչյուր Խոսքին այնպես, ինչպես գրված է, առանց որևէ բան ավելացնելու, պակասեցնելու և փոխելու (Հայտն. 22:16-21):

Հենց այդպես էլ լինելու է

Նաև 1 Թես. 4:13-18 համարների վերաբերյալ անհրաժեշտ է ճշգրիտ կերպով հետևել թեմային, գրվածին և փաստերին: Նախ, այստեղ խոսվում է Քրիստոսով ննջածների մասին. *«Չենք ուզում, եղբայրներ, որ անգետ լինեք ննջեցյալների վերաբերյալ, որ չտրտմեք, ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն: Որովհետև, եթե հավատում ենք, թե Հիսուսը մեռավ, այնպես էլ Աստված Հիսուսով ննջողներին կբերի Նրա հետ»:* (1Թես. 4:13, 14):

Եվ որպեսզի բոլորը դա լրջությամբ ընդունեն, Պողոս առաքյալը գրում է. *«Որովհետև, Տիրոջ Խոսքով ձեզ սա ասենք, թե մեզնից նրանք, որ կենդանի են ու մնան մինչև Տիրոջ գալուստը, ննջեցյալներից առաջ չեն անցնելու: Որովհետև Տերն Ինքը ազդարարության հրամանով, հրեշտակապետի ձայնով ու Աստծո փողով կիջնի երկնքից, և նախ Քրիստոսով մեռածները հարություն պիտի առնեն: Եվ հետո մենք, եթե ողջ մնանք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք ամպերով օդի մեջ Տիրոջը դիմավորելու, և այդպես հավիտյան Տիրոջ հետ պիտի լինենք»*: Իրոք, Իր վերադարձի ժամանակ Տերը երկրի վրա չի իջնում, այլ մենք Նրան հանդիպելու ենք օդերում, որ բարձրանանք հարսանիքի ընթրիքին (Հայտն. 19:7):

Ուշագրավ է նաև այն, որ Աստվածաշունչը խոսում է միայն մեկ հրեշտակապետի մասին, և դա Միքայելն է, ով նշանակված է նաև որպես մեծ իշխան և պաշտպան (Դանիել 10:13, 14, 21):

Դանիել 12:1 համարում Իսրայելի վերաբերյալ գրված է. *«Եվ այն ժամանակ վեր կկենա այն մեծ իշխան Միքայելը, որ կանգնած է քո ժողովրդի որդիների վրա...»*:

Հուդայի թղթի 9-րդ համարում գրված է. *«Իսկ Միքայել հրեշտակապետը, սատանային դիմադրելիս, երբ վիճում էր Մովսեսի մարմնի համար, չհամարձակվեց հայհոյալից բառերով մեղադրել նրան, այլ միայն ասաց. «Տերը թող հանդիմանի քեզ»*:

Հայտնության 12-րդ գլխում Միքայել հրեշտակապետը հիշատակվում է հափշտակության մեծ իրադարձության հետ կապված: Նախ խոսվում է հաղթողների մասին, որպես «արու զավակի», որոնք հափշտակվելու են Աստծո և Նրա գահի մոտ: Փեսան փառքի մեջ է տանում հաղթական Հարսին՝ անցնելով երկնքում գտնվող բոլոր պարտված զորությունների կողքով (Եփես. 6:12): Հափշտակության պահին պատերազմ է լինում երկնքում՝ Միքայելը և իր հրեշտակները պատերազմում են վիշապի դեմ: Այնուհետև Միքայելը ցած է շպրտում եղբայրներին մեղադրողին ու իր հրեշտակներին: Հաղթողների խումբը վերև է բարձրանում, իսկ սատանան ցած է գցվում: *«Եվ ցած գցվեց մեծ վիշապը, այն առաջին օձը, որ Բանսարկու և սատանա է կոչվում. բովանդակ աշխարհը մոլորեցնողը երկրի վրա ցած գցվեց, և իր հրեշտակներն էլ իր հետ գցվեցին»* (հ.9): Այդ ժամանակ վերջանում է Արյան,

Խոսքի և Հոգու միջոցով կատարելության հասած «եղբայրների» դեմ մեղադրանքը: *«...որովհետև ցած գցվեց մեր եղբայրների չարախոսը, որ գիշեր-ցերեկ Աստծո առաջ չարախոսում էր նրանցից: Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով ու իրենց վկայության խոսքով և իրենց անձերը չսիրեցին մինչև մահ»* (hh 10,11):

Այն ուսմունքը, որն ասում է, թե 1963 թվականին, երբ Բրանհամ եղբայրը քարոզում էր Կնիքների բացման վերաբերյալ, Գառնուկը լքել է շնորհաց գահը և «իջնում է պատգամի մեջ», սուտ վարդապետություն է, ողբերգական թյուրիմացություն: Գառնուկը չի եղել գահի վրա: Գառնուկը կանգնած էր գահի և քսանչորս երեցների մեջտեղում: *«Եվ տեսա. ահա այն գահի մեջտեղը և չորս կենդանիների մեջտեղը և երեցների մեջտեղը՝ մորթվածի պես մի Գառ կանգնած»* (Հայտն. 5:6): Գահի վրա նստած էր Նա, ով ապրում է հավիտյան, և Գառնուկը գնաց և Նրա աջ ձեռքից վերցրեց Գիրքը (h. 7): Երկու հազար տարի առաջ Հովհաննեսը այդպես տեսավ Պատմոս կղզու վրա: Մինչև կատարելությունը, Նոր Ուխտի Արյունը մնում է շնորհաց գահի վրա, Ուխտի տապանակը՝ Սրբության Սրբոցում (Ելից 25:17-22, Ղևտ.16): Հենց այնտեղ որպես Քահանայապետ և Նոր Ուխտի Միջնորդ՝ Փրկիչը մատուցեց Իր Արյունը (Եբր. 9:5-15): Հենց այնտեղ է Նա մնալու մինչև Աստծո փրկության ծրագիրը իրականանա բոլոր հավատացյալների համար: Հափշտակությունից հետո, մեծ նեղության ժամանակ կլինեն դեռ հավատացյալներ, որոնք իրենց հանդերձները կլվանան Գառնուկի Արյունով (Հայտն. 7:9-17):

Երանելի է նա, ով հավատում է այնպես, ինչպես գրված է

1 Թեսաղոնիկեցիս 4-րդ գլխի վերաբերյալ ուրիշ ի՞նչ տեղ կա թյուրիմացության կամ մեկնության համար: Մեզ պարզ ասվում է, որ Տերն Ինքն է իջնելու հրեշտակապետի ձայնով ու Աստծո փողով՝ հնչեցնելով ազդարարության հրամանը՝ մեռելներին արթնացնելու համար: Արդեն Իր համբարձման ժամանակ երկու հրեշտակներն ասացին. *«Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք համբարձվեց, նույն ձևով կգա, ինչպես որ Նրան տեսաք երկինք գնալիս»* (Գործք 1:11): Սաղմոս 47:5 համարում գրված է. *«Աստված ցնծության գոչյուններով վեր բարձրացավ, Տերը՝ շեփորի ձայնով»*: Հենց այդպես է Տերը վերադառնալու:

Նրա փառավոր վերադարձի ժամանակ խոսվում է ազդարարության հրամանի մասին, որն արձակելու է մահին հաղթած Տերը, ով ասաց Ղազարոսի հարության ժամանակ. *Ես եմ Հարությունը և Կյանքը...»* և Հովհաննեսին ասաց Պատմոս կղզու վրա. *«Մի՛ վախեցիր, ես եմ Առաջինն ու Վերջինը և կենդանի եղողը: Ես մեռած էի և ահա կենդանի եմ հավիտյանս հավիտենից: Ամեն: Եվ դժոխքի ու մահվան բանալիներն ունեմ»* (Հայտն.1:17-18): Քրիստոսի վերադարձի ժամանակ նախ Քրիստոսով մե-

ռածները հարություն կառնեն, իսկ Նրանով ապրողները կփոխվեն և բոլորը միասին կհափշտակվեն ամպերով Տիրոջը դիմավորելու: Ամեն: Դա է ԱՅՍՊԵՍ է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ:

Այդ ժամանակ կիրականան ներքոհիշյալ սուրբգրային համարներում գրվածները.

«Որովհետև ինչպես որ կայծակն արևելքից դուրս է գալիս ու մինչև արևմուտք երևում, այնպես էլ Մարդու Որդու գալուստը կլինի» (Մատթ. 24:27):

«Այն ժամանակ արտում երկու մարդ կլինեն. մեկը կվերցվի, իսկ մյուսը՝ կթողնվի» (Մատթ.24:40):

«Որովհետև ինչպես կայծակն է փայլատակում երկնքում և լույս է տալիս երկնակամարի մի ծայրից մինչև մյուս ծայրը, այնպես էլ կլինի Մարդու Որդին Իր գալստյան օրը» (Ղուկաս 17:24):

«Ասում եմ ձեզ, այդ գիշեր, եթե մեկ անկողնում երկու հոգի լինեն, նրանցից մեկը պիտի վերցվի, մյուսը՝ թողնվի» (Ղուկաս 17:34):

«Եվ <u>եթե Հիսուսին մեռելներից հարություն տվողի Հոգին</u> բնակվում է ձեր մեջ, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի Իր Հոգով, որ բնակվում է ձեր մեջ»: (Հռոմ.8:11):

«...բայց գիտենք, որ երբ նա հայտնվի, Նրա նման կլինենք, <u>որովհետև կտեսնենք նրան, ինչպես որ է»</u> (1 Հովհ.3:2):

Ոհ, ինչպիսի օր է լինելու

Քրիստոսի վերադարձը, որին սպասում են բոլոր հավատցյալները համբարձումից ի վեր, Փրկության պատմության բոլոր ժամանակների ամենամեծ իրադարձությունն է լինելու, որովհետև *«այդպես հավիտյան Տիրոջ հետ պիտի լինենք»* (1 Թես. 4:17):

Ենովքը հափշտակվեց, և դա իրական էր, ու «այլևս չէր գտնվում»: Նա, ով Քրիստոսի վերադարձին հոգևոր բնույթ է վերագրում կամ հավատում է, որ հափշտակությյունը մի հայտնություն է, որի մեջ տեղափոխվում են հոգով, բայց իրականում տեղի չի ունենում, ոչ միայն անմիտ մոլորության զոհ է դարձել, այլև այդպիսի մոլորության քարոզիչներին է վերաբերում այս խոսքը. *«Որովհետև շատ մոլորեցնողներ են ի հայտ եկել աշխարհում, որոնք Հիսուս Քրիստոսին, <u>որպես մարմնով եկածի</u>, չեն խոստովանում: Սա մոլորեցնող է և հակաքրիստոս»* (2 Հովհ. հ.7): (Այլ թարգմանություններում՝ մարմնով գալիս չեն ընդունում):

Իմաստուն կույսերին, որոնք չեն մոլորվում, ուղղված են Պետրոսի խոսքերը. *«Որովհետև մենք ոչ թե վարպետությամբ հնարված առասպել-ների հետևելով ձեզ ցույց տվեցինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի <u>զորու-</u>*

թյունն ու գալուստը, այլ Նրա մեծափառությանն ականատես լինելով» (2 Պետր.1:16):

Ուիլյամ Բրանհամը պատասխանատվություն ուներ Եկեղեցուն բերելու դուրս գալու և պատրաստվելու վերջին պատգամը: Հետևաբար, բնական է, որ նա շեշտը դրել է Մատթ. 25-րդ գլխում գրվածի վրա: *«Այժմ ժամանակն է ճրագները կարգի բերելու և ամանները յուղով լցնելու»*: Նա երեսունվեց անգամ խոսել է առաջին և վերջին անձրևների մասին: 1961 թվականի հունվարի 21-ին այն նույն համոզվածությամբ, որը Պետրոսն ուներ Պենտեկոստեի օրը, նա կրկնեց Հովել 2-րդ գլխի խոստումը նույնիսկ աղոթքում. **«Իմ Հոգին կթափեմ ամեն մարմնի վրա: Դու դա խոստացել ես: Ասել ես, որ վերջին օրերում թափվելու են միասին առաջին և վերջին անձրևները»**: Երկու հազար տարի առաջ այսպես գրեց Հակոբոս առաքյալը. *«Արդ, եղբայրներս, մինչև Տիրոջ գալուստը համբերող եղեք: Ահա մշակը համբերությամբ սպասում է հողի պատվավոր պտղին, մինչև որ առաջին ու վերջին անձրևն առնի»* (Հակոբ 5:7): Հետո, հետևում է Հոբի օրինակը, որին Տերը կրկնակի փոխհատուցում տվեց (Հոբ 42): Նույնն է լինելու Հոգով լցված Եկեղեցու համար:

«Հափշտակություն» քարոզում Բրանհամ եղբայրը խոսել է նաև ուրիշ դժվարըմբռնելի բաների մասին: Մինչդեռ նա ով սրտով ուղիղ չէ, սխալ կհասկանա ասվածը, ինչպես Պետրոսի վկայության համաձայն սխալ էին հասկանում Պողոսի ասածները (2 Պետրոս 3:16,17): Պետք չի կարդալ կամ լսել միայն մեկ խոսք, այլ պետք է շարունակել կարդալ և լսել, մինչև այդ դժվար խոսքը բյուրեղի պես պարզ դառնա: Նա, ով պատգամաբերի բոլոր ասածները գտնում է Սուրբ Գրքի մեջ, ունի անսխալական Խոսքի Բացարձակ Հիմքը, որը հավիտյան է մնում: Նա կընդունի թեմայի վերաբերյալ բոլոր սուրբգրային հատվածները, նաև այն ինչ գրված է 1 Կորնթ. 15-րդ գլխի 51-րդ համարից մինչև վերջ. *«Ահա, մի խորհուրդ հայտնեմ ձեզ. բոլորս պիտի չննջենք, բայց բոլորս պիտի փոխվենք, հանկարծակի, մեկ ակնթարթում վերջին փողի ժամանակ,, որովհետև փողը կհնչի, մեռելները հարություն կառնեն առանց ապականության, և մենք կփոխվենք»*: Այդ ժամանակ մահկանացու մարմինը կդառնա անմահ, իսկ մահը կուլ կգնա խաչյալ և հարուցյալ Փրկչի հաղթության: *«Եվ երբ այս ապականացուն անապականություն հագնի, և այս մահկանացուն անմահություն, այն ժամանակ կկատարվի այն խոսքը, որ գրված է. «Մահը կուլ գնաց հաղթության»* (հ. 54):

Երբ է Աստծո Որդին հայտնվում և երբ է գալիս

Բրանհամ եղբայրը ավելի քան հարյուր անգամ հիշատակել է Ղուկաս 17:30 համարը. *«Նույն կերպ էլ այն օրը կլինի, երբ Մարդու Որդին կհայտնվի»*: Մենք պետք է ուշադրություն դարձնենք այս երկու խոսքերին՝

«երբ Նա հայտնվում է» և «երբ Նա գալիս է»: Մեր ժամանակներում Աստծո Որդին հայտնվեց այնպես, ինչպես անցյալում, երբ Նա քայլում էր երկրի վրա: Նա Կրակի Սյունով իջավ ինչպես Մովսեսի ժամանակներում. Բրանհամ եղբայրը դա ապրեց հազարից ավելի հավաքույթների ժամանակ: Մինչդեռ դա Տիրոջ վերադարձը չէր, այլ հավաքույթների ժամանակ հաստատվում էր Նրա գերբնական ներկայությունը: 1962 թվականի հուլիսի 28-ին Բրանհամ եղբայրն ասաց. **«Մինչև ձեզ հրաժեշտ տալը խնդրում եմ, ուշադրություն դարձրեք այս երկու բառերին: Քրիստոսի հայտնությունը և Քրիստոսի վերադարձը երկու տարբեր բաներ են: Այժմ Քրիստոսը հայտնվում է Իր զորության լիությամբ, Նրա գալուստը կլինի հետո»**:

Մեր ժամանակներում ժամի պատգամը նախորդում է Քրիստոսի վերադարձին: 2013 թվականի հունիսին լրացավ 80 տարին այն օրվա, երբ հնչեց ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքը. **«Ինչպես Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց Քրիստոսի առաջին գալստից առաջ, դու կուղարկվես մի պատգամով, որը կպատրաստի Քրիստոսի երկրորդ գալուստը»**: 1960 թվականի փետրվարի 10-ին Բրանհամ եղբայրն ասաց. «**Ոչ թե ես եմ սուրհանդակը, այլ պատգամն է լինելու սուրհանդակը»**: 1963 թվականի հունվարի 15-ին ասաց. **«Այժմ գալիս է այն ժամը, երբ ինչ-որ բան է լինելու: Պատգամը գնալու է ուրիշ ազգի, ուրիշ ժողովրդի մոտ: Ամերիկայի եկեղեցին համարյա կանչված է»**: 1958 թվականի հունիսի 12-ին Թեքսաս նահանգի Դալլաս քաղաքում, այն բանից հետո երբ Բրանհամ եղբայրն ինձ ասաց. **«Ֆրանկ եղբայր, դու այս պատգամով կվերադառնաս Գերմանիա»,** դրանից մոտ մեկ ժամ անց, քարոզի սկզբում նա ասաց. **«Քիչ առաջ Գերմանիայից մի եղբայր ողջագուրեց ինձ»**: 1963 թվականի հունվարի 18-ին ավելացրեց. **«Գուցե իմ տուն գնալու ժամանակն է: Թվում է, ամեն ինչ այդ ուղղությամբ է գնում: Եթե այդպես է, ինձանից հետո կգա մեկը և կշարունակի այս պատգամը տանել: Դա առանձնահատուկ անձնավորություն կլինի: Բայց նա հետո կգա և կշարունակի տանել այս պատգամը»**: Նույն Բրանհամ եղբայրը 1962 թվականի դեկտեմբերի 3-ին ինձ ասաց. **«Կերակուրը բաժանելու համար սպասիր, մինչև մնացածն էլ ստանաս: Ֆրանկ եղբայր, Տերը քեզ կանչել է Իր Խոսքը քարոզելու»**:

Այն բանից հետո, երբ Տերը վերցրեց պատգամաբերին, ես շարունակեցի պատգամը տանել մինչև երկրի ծայրերը, ինձ տրված հանձնարարության համաձայն:

Ամեն բան կրկնվում է, որովհետև Աստծո պարգևներն ու կոչումները անփոփոխելի են (Հռոմ. 11:29)

Հին Կտակարանում Աստված խոսել և գործել է Իր ծառաների և մարգարեների միջոցով: Նոր Կտակարանում Նա Իր խորհուրդը հայտնել է Իր սուրբ առաքյալներին և մարգարեներին (Եփես. 3:5): Որպես մարգարե՝ նրանք տեսիլքով տեսնում էին Աստծո ծրագրերը, որպես ծառա՝ նրանք կատարում էին այն, ինչ Աստված իրենց պատվիրել էր: Մնում է այն, ինչ գրված է. *«Որովհետև Տեր Եհովան ոչ մի բան չի անի, եթե չհայտնի Իր խորհուրդը Իր ծառաներին մարգարեներին»* (Ամովս 3:7):

Նոր Կտակարանում Իր առաջին նամակի առաջին համարում Պողոսը ներկայանում է որպես ծառա և առաքյալ. *«Պողոս՝ Հիսուս Քրիստոսի ծառա, կանչված առաքյալ լինելու, առանձնացված Աստծո Ավետարանի համար ընտրված, այն, որ Նա նախապես խոստացել էր Իր մարգարեների միջոցով Սուրբ գրքերում»* (Հռոմ. 1:1,2):

Հակոբոսը ներկայանում է այսպես. *«Հակոբոսը՝ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի ծառան, ամենուրեք ցրված տասներկու ցեղերիդ ողջույն»* (Հակոբ 1:1):

Պետրոսն այսպես է ներկայանում. *«Սիմոն Պետրոս՝ Հիսուս Քրիստոսի ծառա և առաքյալ, ծեզ, որ մեր Աստծո և Փրկիչ Հիսուս Քրիստոսի արդարությամբ պատվական նույն հավատն ընդունեցիք...»* (2 Պետր.1:1):

Հայտնությունը տրվեց Հովհաննես առաքյալին՝ որպես ծառայի, որպեսզի նրա միջոցով մյուս ծառաներն էլ նույն հայտնությունը ստանան. *«Հիսուս Քրիստոսի հայտնությունը, որ Աստված տվեց նրան՝ իր ծառաներին ցույց տալու, ինչ որ շուտով պիտի լինի, և իմացրեց իր հրեշտակի միջոցով՝ ուղարկելով իր Հովհաննես ծառային»* (Հայտն. 1:1):

Իսկ վերջին գլխում դա նորից է հաստատվում. *«Եվ ինձ ասաց. «Այս խոսքերը հավաստի ու ճշմարիտ են»: Ու Տերը՝ սուրբ մարգարեների հոգիների Աստվածը, ուղարկեց իր հրեշտակին, որ իր ծառաներին ցույց տա այն, ինչ շուտով պետք է լինի: Ահա շուտով գալիս եմ. երանի նրան, ով այս գրքի մարգարեության խոսքերը պահում է»* (Հայտն.22:6, 7):

Երբ խոսքը վերաբերում է ծառայությանը՝ մեր Տերն ու Փրկիչն էլ Ծառա դարձավ. *«Ահա Իմ ծառան, որին ես հաստատել եմ, Իմ ընտրածը, որին հավանել է Իմ Հոգին, Ես Իմ Հոգին դրել եմ Նրա վրա, Նա իրավունքը պիտի հանի ազգերի համար: Նա չի աղաղակի ու ձայն չի բարձրացնի, և իր ձայնը լսել չի տա դրսում»* (Եսայի 42:1,2):

Մատթ. 12:18-21 համարներում տեսնում ենք դրա իրականացումը. *«Ահա Իմ ծառան, որին Ես ընտրեցի, Իմ սիրելին, որին Իմ անձը հավանել է... ջախջախված եղեգը չի փշրի և առկայծող պատրույգը չի հանգցնի, մինչև որ դատաստանը հաղթանակի հասցնի»*: Հաղթանակ: Ամեն:

«Իր անձի աշխատության պտուղը տեսնելով պիտի կշտանա, իր գիտությամբ պիտի արդարացնի իմ արդար ծառան շատերին» (Եսայի 53:11):

Տերը Ծառա դարձավ, որ հնազանդության միջոցով իրականացնի փրկագնման մեծ հանձնարարությունը. *«...Իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահվան»* (Փիլիպ. 2:8):

Պետրոսը կոչումով առաքյալ էր, բայց ծառա էր՝ աստվածային հանձնարարությունը իրագործելով:

Նույնը վերաբերում է Հովհաննես և Հակոբոս առաքյալներին. նրանք կոչումով և ստացած հանձնարարությամբ առաքյալ են, և իրենց ծառայությունը կատարելով՝ Քրիստոսի ծառաներ են: Տերն ասաց. *«Ահա ես ձեզ ուղարկում եմ...»* (Մատթ. 10:16): «*...Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում»* (Հովհ.20:21): Աստված դրել է առաքյալներ, մարգարեներ, վարդապետներ, ավետարանիչներ և հովիվներ Եկեղեցու շինության համար:

Առաքյալները և մարգարեները ուղղակի և անձնական կոչում էին ստանում, առանց որի լիազորության մասին խոսք լինել չի կարող:

Պողոսը վկայեց. *«Եվ երբ գնալիս Դամասկոսին էի մոտենում, կեսօրվա դեմ երկնքից հանկարծակի իմ չորս կողմում մի ուժեղ լույս փայլեց»* (Գործք 22:6): Կանչի հետ կապված է աստվածային նախասահմանությունը. *«Եվ նա ասաց. «Մեր հայրերի Աստվածը քեզ ընտրել է, որպեսզի ճանաչես Նրա կամքը ու տեսնես այն Արդարին և Նրա բերանից ձայնը լսես... Գնա՛, որովհետև ես քեզ հեռու, հեթանոսների մեջ եմ ուղարկելու»* (Գործք 22: 14, 21):

Աստծո ամեն ծառա գիտեր, թե ինչ պիտի անի: Հովհաննես Մկրտիչն ասաց. *«Եվ ես չգիտեի Նրան, բայց Նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ինձ ասաց. «Ում վրա դու տեսնես Սուրբ Հոգին կիջնի և կմնա, Նա է, որ մկրտում է Սուրբ Հոգով»* (Հովհ. 1:33):

Բրանհամ եղբայրը կարող էր ճշտորեն կրկնել այն, ինչ իրեն ասվել էր 1933 թվականի հունիսի 11-ին և այն, ինչ երկնային պատգամաբերն ասել էր իրեն 1946 թվականի մայիսի 7-ին. «Մի վախեցիր, ես քեզ մոտ ուղարկվել եմ Աստծո ներկայությունից...»: Բայց մենք, որպես Աստծո եկեղեցի, ի՞նչ օգուտ կունենայինք, եթե ընդունեինք միայն այն, ինչ Աստված արել է անցյալում, թե ինչ հանձնարարություն է Նա կապել տարբեր պատգամների, ընդհուպ մինչև Բրանհամ եղբորը տրված պատգամի հետ, եթե չմասնակցեինք այն գործին, որը Նա անում է ներկայում:

Դրա հետ կապված է մեծ պատասխանատվություն

Աստծո ոչ մի մարդ ինքն իր մասին չի վկայում, այլ վկայում է միայն այն, ինչ Աստված է ասել և արել: Ինձ էլ Տերը բազմիցս կանչել է՝ անվանելով «Իմ ծառա», և առաջին անգամը 1962 թվականի ապրիլի 2-ին էր. «Իմ ծառա, շուտով այս քաղաքում քո ժամանակը վերջանում է: Ես քեզ կուղարկեմ ուրիշ քաղաքներ քարոզելու Իմ Խոսքը»: Դա նույնքան ճշմարիտ է, որքան այն, որ Աստված կենդանի է, և անմիջական կոչում ստանալով և Աստծո կամքով այդպես էլ արել եմ վերջին հիսուն տարիների ընթացքում: Բոլորը գիտեն, որ Տերը նաև ասաց. «Իմ ծառա, կերակրի պաշար հավաքիր, որովհետև մեծ սով է լինելու, և դու կանգնելու ես ժողովրդի մեջ և կերակուր ես բաժանելու»:

«Իմ ծառա, Մատթ. 24:45-47 համարների համաձայն ես քեզ նշանակել եմ կերակուր բաժանելու...»: Մեր Տիրոջ Խոսքը պիտի կատարվեր հիմա. Տերն Ինքն ասաց «ծառայի» մասին. *«Ուրեմն ո՞վ է այն հավատարիմ ու իմաստուն ծառան, որի տերը նրան իր ծառաների վրա դրեց, որ նրանց ուտելիքը ժամանակին տա»*: Նա գիտեր, թե դա երբ է կատարվելու:

Այստեղ խոսվում է խելացի ծառայի մասին, որին Տերն Ինքն է նշանակել, այդպես է գրված, այդպես է Տերն ասել: Սա է ժամանակի պատվիրանը՝ հոգևոր կերակուր բաժանել ծառաներին, որպեսզի իրենք էլ մասնակցեն բաժանմանը: Դա Աստծո փրկության ծրագրի մաս է կազմում, որին ենթարկվում ենք բոլորս:

Բրանհամ եղբայրը կերակուր պահեստավորեց Տիրոջ պատվերի համաձայն: Պատահական չէ, որ 1962 թվականի ապրիլի մեկին նա ասաց, որ Տերը պատվիրեց նրան չմեկնել Շվեյցարիա, այլ կերակուր պահեստավորել: Պատահական չէ, որ 1962 թվականի ապրիլի երկուսին Տերը պատվիրեց ինձ կերակրի պաշար հավաքել: Պատահական չէ, որ 1962 թվականի դեկտեմբերի 3-ին մարգարեն ասաց երկու վկաների ներկայությամբ. **«Ֆրանկ եղբայր, կերակուրը, որը պետք է ամբարես, մեր ժամանակի համար խոստացված Խոսքն է: Այդ կերակուրը ձայներիզների վրա ձայնագրված քարոզներն են, ուստի բաժանելու համար սպասիր, մինչև մնացած կերակուրն էլ ստանաս»**: Պատահական չէ նաև այն, որ Ամովս 8:11 համարում Տերը հայտնել է, որ հոգևոր սով է ուղարկելու, Աստծո Խոսքը լսելու սով: Մեր ժամանակաշրջանում նույնպես Աստված ոչինչ չարեց առանց հայտնելու Իր կամքը Իր ծառաներին ու մարգարեներին ու Իր ծառաներին, առաքյալներին (Ամովս 3:7, Եփես. 3:5):

Պատահական չէ, որ Մատթ. 24-րդ գլխում նախ Տերը խոսում է այն ամենի մասին, ինչ կատարվելու է, հետո ուղղակիորեն անցնում է Եկեղեցու համար ամենակարևոր սուրբգրային հատվածին (հհ. 45-47): Այդ խոսքերը Տերն ասաց բարձրաձայն ու շեշտելով: Հետո գալիս են Մատթ.

25:1-12 համարները: Այս ժամանակաշրջանի համար այս երկու սուրբգրային հատվածները կարևոր են: Այժմ կանչվածների մեջ են «իմաստուն կույսերը» և «հիմար կույսերը»: Իմաստունները կհարգեն Աստծո կողմից դրված ծառայությունը, կընդունեն մաքուր հոգևոր կերակուրը, կլցվեն Սուրբ Հոգով ու կկնքվեն:

Ես ուրիշ շատ փորձառություններ էլ եմ ունեցել, որոնցում Տերը հրամայական տոնով ինձ անվանել է «Իմ ծառա» և հանձնարարություններ է տվել: Երբ ես հիշում եմ դա, ավելի ու ավելի եմ գիտակցում այն պատասխանատվությունը, որը կապված է ուղղակի հանձնարարության հետ: Ես ընդամենը մի մարդ եմ, որը հույսը դրել է Տիրոջ ողորմության վրա: Բայց ինչ վերաբերում է ծառայությանը, ես ամեն ինչ արել եմ Տիրոջ պատվերի համաձայն՝ անձամբ Խոսքը քարոզել եմ 150-ից ավելի երկրներում, տարածել եմ պատգամը աշխարհով մեկ, բազմաթիվ հեռուստակայանների ու ռադիոկայանների միջոցով, ես թարգմանել եմ Բրանհամ եղբոր քարոզները և այդպիսով՝ կերակուր բաժանել: Թեև դա հայտնի փաստ է, որ Բրանհամ եղբոր հեռանալուց հետո ես պատգամը տարածել եմ աշխարհով մեկ, բայց նոր եկողների համար թող ևս մեկ անգամ ասվի: Նա, ով ունի Ճշմարտության Հոգին, կհավատա, իսկ ով մոլորության հոգին ունի, չի կարող հավատալ: Փրկության ծրագրի հետ կապված ուղղակի լիազորությունը կընդունեն և դրան կհավատան միայն նրանք, ովքեր երկնքի Թագավորությունում են և պատկանում են Հարս-Եկեղեցուն:

Այն, որ ուղղակի կոչման ու լիազորության հետ կապված է Աստծո Եկեղեցում եղած մեծագույն պատասխանատվությունը, ակնհայտ է, բայց մենք նաև գիտակցում ենք, որ առաքյալը զգուշացրել է այն եղբայրների դեմ, որոնք սուտ ուսմունքներով բաժանումներ են առաջացնում (Հռոմ. 16:17): Նաև 2 Կորնթացիս թղթում, որտեղ խոսում է Քրիստոսին մաքուր կույս ներկայացնելու իր փափագի մասին, նա գանգատվում է սուտ եղբայրների դեմ, որոնց անվանում է սուտ առաքյալներ, խաբեբա աշխատավորներ, որոնք կերպարանափոխվում են: 13-րդ գլխում նորից հորդորում է հավատացյալներին. «Կատարյալ եղեք»:

Գաղատիայի եկեղեցուն գրում է շատ խստորեն. *«Եթե մեկը ձեր ընդունածից ուրիշ ավետարան քարոզի ձեզ, նզովյալ լինի»*:

Եփես. 4-րդ գլխում խոսում է վարդապետության տարբեր քամիների մասին, որոնց անվանում է մարդկային խաբեբայություն: Դա ճիշտ է, և 2 Տիմ. 2:16-22 համարներում նա խոսում է պիղծ ունայնախոսությունների մասին, որոնք ավելի առաջ են տանում ամբարշտության մեջ, նշեց Հիմենոսին ու Փիլետոսին՝ ասելով, որ նրանց քարոզած վարդապետությունը՝ թե հարությունն արդեն եղել է, ճարակում էր քաղցկեղի պես: Մի՞թե հիմա այդպես չէ, բոլոր այդ սուտ ուսմունքներով: Մինչև հիմա ճշմարիտ վարդապետությունը երբեք բաժանումներ չի առաջացրել, ընդհակառակը,

Աստծո դրած բոլոր ծառայությունները ծառայում են Եկեղեցու շինությանը (Եփես. 4):

Պողոսը պատասխանատվություն ուներ, նա ուներ կոչում, լիազորություն, ուղղակի հանձնարարություն: Աստծո Եկեղեցին իր համար ճշմարտության սյունն ու հաստատությունն էր (1 Տիմ. 3:15): Նա իր քարոզչության նպատակն ամփոփեց 1 Կորնթ. 9:1-3 համարներում. *«Չէ՞ որ ես առաքյալ եմ, չէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսին տեսել եմ, չէ՞ որ դուք իմ գործն եք Տիրոջով: Թեկուզ ուրիշների համար առաքյալ չլինեմ, բայց հենց ձեզ համար առաքյալ եմ. իմ առաքելության կնիքը դուք եք Տիրոջմով: Ինձ քննադատողների դեմ իմ պատասխանը սա է»*:

«Այնպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած Խոսքը, նա պիտի պարապ ետ չդառնա ինձ մոտ, այլ կատարի իմ ուզածը և հաջողվի նրանում, ինչի համար որ ես նրան ուղարկեցի» (Եսայի 55:11):

Ի՞նչ է կատարվում հիմա

Այժմ արթնության կանչը հնչում է բոլոր ապրողների համար. *«Ահա փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու»*: Այժմ հնչում է այս պատգամը. *«Դրանից դուրս եկեք, ով Իմ ժողովուրդ, որպեսզի դրա մեղքերին մասնակից չլինեք...»* (Հայտն.18:4): *«Դրա համար նրանց միջից դուրս գնացեք ու բաժանվեցեք,— ասում է Տերը,— և պիղծ բաների մի դիպչեք: Եվ ես ձեզ կընդունեմ ու ձեզ Հայր կլինեմ, և դուք ինձ որդիներ ու դուստրեր կլինեք»*,— *ասում է Ամենակալ Տերը»* (2 Կորնթ.6:17,18): Այժմ Աստծո ժողովուրդը ապրում է պատգամը դրա հետ կապված բոլոր խոստումների իրականացումով՝ դուրս գալը, զատվելը և պատրաստվելը, մինչև ամեն բանի վերականգնմանը հասնելը, որն իրականություն է դառնալու Քրիստոսի երկրորդ գալստից առաջ: *«Առաքյալների ու մարգարեների հիմքի վրա շինված, որի անկյունաքարը Քրիստոսն է...»* (Եփես.2:20):

Որովհետև գրված է. *«...Հիսուս Քրիստոսին, որին երկինքը պետք է <u>ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատման ժամանակները,</u> որոնց մասին Աստված խոսեց իր սուրբ մարգարեների բերանով սկզբից ի վեր»* (Գործք 3:19-21): Եղիայի խոստման իրականացումը, որը գրված է Մաղաքիա 4:5 համարում, և որը մեր Տերը հաստատեց Մատթ. 17:11 համարում, կապ ունի դրա հետ: *«Իրոք, առաջ Եղիան է գալու և <u>ամեն ինչ վերահաստատելու է»</u>* (Մատթ.17:11): Եվ որպեսզի ամեն բան հաստատվի երկու կամ երեք վկայի վկայությամբ, կարդում ենք այն, ինչ մեր Տերն ասաց Մարկոս 9:12 համարում. *«Իրոք նախ Եղիան կգա և <u>ամեն ինչ կարգի կդնի</u>»*: Այժմ այս սուրբգրային հատվածը իրականացավ մեր աչքերի առաջ ու ականջները լսեցին, ու բոլոր թեմաները, ինչպես աստվածությունը, մկրտությունը, Տերունական Ընթրիքը, բոլոր մյուս թեմաները

սուրբգրային ձևով վերականգնվեցին իրենց սկզբնական վիճակին: Հովհաննես Մկրտիչը գիտեր իր լիազորությունը, բայց նրա ծառայությունը մանրամասն նկարագրվեց միայն չորս Ավետարանները գրվելու ժամանակ: Նույնպես Բրանհամ եղբայրը գիտեր, թե որն է իր ծառայությունը և դրա հետ կապված սուրբգրային համարները, բայց միայն հետո այն ամբողջությամբ դասավորվեց Փրկության պատմության մեջ: Չորս ավետարանները գրվեցին միայն Հիսուսի համբարձումից հետո, Գործք առաքելոցը շարադրվեց միայն Սուրբ Հոգու հեղումից հետո: Եկեղեցիներին ուղղված նամակները գրվեցին միայն եկեղեցիների հիմնումից հետո: Նույնպես մենք Բրանհամ եղբորը տրված հանձնարարության ողջ կարևորությունը հասկացանք նրա ծառայության ավարտից հետո: Միայն հետո կարողացանք սուրբգրային ձևով դասավորել նրա ասածները: Քանի անգամ է Բրանհամ եղբայրն ասել, որ պատգամը սա է՝ **«վերադառնալ Աստծո Խոսքին, վերադառնալ սկզբին, վերադառնալ առաքյալների վարդապետությանը, վերադառնալ Պենտեկոստեի տոնին»**: Այժմ բոլոր նրանք, ովքեր հավատում են Սուրբ Գրքի համաձայն, ապրում են դա: Ինչպես արդեն բազմիցս շեշտել ենք, Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցում վերջին քարոզը կլինի առաջին քարոզի նման: Վերջին մկրտությունը կլինի առաջին մկրտության նման: *«Մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն...»*:

Վերջին տերունական ընթիքը կլինի առաջինի նման՝ մեկ հացով և մեկ գավաթով, ոչ թե սկուտեղի վրա դրված հարյուրավոր փոքրիկ գավաթներով, ինչպես ընդունված է շատ վայրերում: Տերունական ընթրիքի վերաբերյալ նույնպես Աստծո եկեղեցու համար ուժի մեջ է մեր Փրկչի աստվածաշնչյան օրինակը (Մատթ. 26:26-29) և առաջին եկեղեցու օրինակը (Գործք 2:42): Պողոսը դրա վերաբերյալ գրել է. *«Օրհնության այն բաժակը, որ օրհնում ենք, չէ՞ որ հաղորդություն է Քրիստոսի արյան: Այն հացը, որ կտրում ենք, չէ՞ որ հաղորդություն է Քրիստոսի մարմնին»* (1 Կորնթ.10:16): Վերջում ամեն տեղական եկեղեցի կլինի սկզբնական եկեղեցու նման՝ վերևից զորություն հագած, մեկ սրտով ու մեկ հոգով, բոլոր ծառայությունները, Հոգու պտուղներն ու պարգևներն ունեցող (1 Կորնթ. 12-14, Եփես. 4): Սա վերականգնման պատգամի կատարված իրականության մաս է կազմում: Ամեն:

Կարևոր համեմատություններ

Եսայի 40:3 համարում նկարագրված է Հովհաննես Մկրտչի ծառայությունը. *«Անապատի մեջ կանչողի ձայնը. «Պատրաստեցեք Տիրոջ ճանապարհը, և ուղիղ արեք ամայության մեջ շավիղը մեր Աստծո համար»*: Սկզբում դա խոստում էր: Հետևյալ խոսքերը նույնպես կապ ունեն թեմայի հետ: *«Ահա ես ուղարկում եմ իմ դեսպանը, որ ճանապարհ պատրաստի իմ*

առաջին» (Մաղաք.3:1): Երբ իրականացման ժամանակը հասավ, խոստումը դարձավ տեսանելի, լսելի և կենդանի իրականություն. *«Մի մարդ կար Աստծուց ուղարկված, որի անունը Հովհաննես էր: Սա վկայության համար եկավ, որ այն Լույսի համար վկայի, որ բոլորը նրա միջոցով հավատան»* (Հովհ.1:6,7): Երբ նա իր ծառայության գագաթնակետին էր հասել, Երուսաղեմից մարդիկ ուղարկեցին՝ հարցնելու համար, թե իրականում ով է ինքը: Նա ասաց. «Ես Քրիստոսը չեմ»: *Եվ նրան հարցրին. «Հապա ո՞վ, Եղիա՞ն ես»: Նա ասաց. «Ոչ»*: Որովհետև համաձայն Մաղաքիա 4:5 համարի՝ Եղիան պետք է գար մեծ և ահեղ օրվանից առաջ: Ուղարկվածները նաև հարցրին. ***«Մարգարե՞ն ես դու»:*** *Նա պատասխանեց. «Ոչ»*: Ոչ թե հարցրին՝ «Դու մարգարե՞ ես», այլ նկատի ունենալով 2 Օրինաց 18:15-19 համարներում տրված խոստումը՝ հարցրին. ***«Մարգարե՞ն ես դու»***: (Հովհ. 1:19-27):

Խոստումը, որը վերաբերում էր Մեսիային՝ որպես Մարգարեի, սա էր. *«Քեզ պես մի մարգարե վեր կկացնեմ նրանց համար իրենց եղբայրների միջից, և Իմ խոսքերը նրա բերանում կդնեմ, և նա կասի նրանց ինչ որ նրան պատվիրեմ: Եվ լինի այն մարդը, որ չլսի իմ խոսքերին, որ նա իմ անունով կխոսի, ես այն մարդուց կպահանջեմ»* (2 Օրին.18:18,19):

Հովհաննեսը մարգարե էր, բայց **մարգարեն** չէր: Նա մեծ էր Հին Կտակարանի մարգարեներից, որոնք մարգարեացել էին Փրկչի մասին, որովհետև ներկայացրեց Նրան: Բայց նա ընդամենը մարդ էր, և Աստծո թագավորությունում ամենափոքրը նրանից մեծ էր (Մատթ. 11:9-11): Իր եզակի ծառայության միջոցով նա կամուրջ գցեց Հին և Նոր Կտակարանների միջև, դրա համար գրված է. *«Օրենքն ու մարգարեները մինչև Հովհաննեսն են. նրանից հետո քարոզվում է Աստծո արքայությունը, և ամեն մարդ ջանք է անում ուժով մտնել նրա մեջ»* (Ղուկաս 16:16): Սուրբ Հոգու հեղումով Աստծո թագավորությունը ուժով ճամփա բացեց, հիմնվեց նորկտակարանյան եկեղեցին, և առաջինները ներս մտան:

Հիսուսի՝ Մեսիայի մասին գրված է. *«Արդ ժողովրդից շատերը, երբ այս խոսքերը լսեցին, ասում էին. «Ճշմարտապես սա է **Մարգարեն**»: Ուրիշներին ասում էին.* ***«Սա Քրիստոսն է»*** (Հովհ. 7:40, 41):

Որպես Մարդու Որդի՝ Մեսիան ոչ միայն մարգարե էր, այլև ***Մարգարեն*** էր, խոստացված Փրկիչը, Հիսուս Քրիստոսը, մեր Տերը: Պետրոսը գիտեր, որ Հին Կտակարանի խոստումը Նրան է վերաբերում. «*Մովսեսն ասաց.«Ձեր Տեր Աստվածը ձեր եղբայրների միջից ինձ նման **մարգարե** կհանի. ամեն բանում, ինչ որ ձեզ ասի, լսեցեք Նրան»*» (Գործք 3:22):

Ստեփանոսը նույնպես դա վկայակոչեց. *«Այս Մովսեսն է, որ Իսրայելի որդիներին ասաց. «Ձեր Տեր Աստվածը ձեր եղբայրների միջից ինձ նման մի **մարգարե** է հանելու. Նրան լսեցեք»* (Գործք 7:37):

2 Օրինաց 18-րդ գլխում ի հակադրություն **«այն Մարգարեի»**, խոսվում է նաև մարգարեի մասին, որին Աստված ուղարկում է (հհ. 20-22):

Եվ ցույց տալու համար նրա և **այն Մարգարեի** միջև տարբերությունը, **ցույց է տրվում մարգարեի սխալականությունը՝ ի հակադրություն Աստված-Մարգարեի անսխալականությանը**. *«Իսկ այն մարգարեն որ հանդգնի իմ անունով խոսք խոսել, այն բանը, որ ես չեմ պատվիրել և կամ օտար աստվածների անունով մի բան խոսի, այն մարգարեն պիտի մեռնի: Եվ եթե քո սրտի մեջ ասես, թե ինչպե՞ս գիտենանք այն խոսքը, որ Եհովան չի խոսել. եթե այն մարգարեն Եհովայի անունով մի բան ասի և այն բանը չկատարվի, ահա այն է Եհովայի չասած խոսքը. մարգարեն հանդգնությամբ է խոսել, նրանից չվախենաս»* (1 Օրինաց 18:20-22):

Ճշմարիտ մարգարեն մնում է ճշմարիտ մարգարե, եթե նույնիսկ ասում է որևէ բան որպես մարդ, առանց Աստծուց ուղղակի պատվեր ստանալու: Մեզ պարզ ասվում է, թե երբ է Տերը խոսել մարգարեի միջոցով, երբ է մարգարեն խոսել ինքն իրենից: Եթե մարգարեի ասածը չի իրականանում, ուրեմն դա Տիրոջ ասած խոսքը չի: Մենք այդ խոսքն էլ պետք է ընդունենք և թողնենք այնպես, ինչպես գրված է:

1963 թվականի հունվարի 18-ին Բրանհամ եղբայրն ասաց. **«Ես պարզապես մահկանացու մարդ եմ, սխալներ եմ գործում: Նա է անմահ ու անսխալական: Նա պետք է պահի Իր Խոսքը, ես կարիք չունեմ պահելու իմը»**: Ինչպես Հովհաննես Մկրտիչը, Բրանհամ եղբայրն էլ խոստացված մարգարե էր, բայց նաև մի մարդ էր, որը հաճույքով գնում էր ձկնորսության և հատկապես սիրում էր ժամանակ տրամադրել որսորդությանը: Իսկ այն պատգամը, որը նա պետք է բերեր Աստծո ժողովրդին, իր մարդկային խոսքերը չէին, այլ Աստծո Խոսքը նրա միջոցով:

Աստվածաշնչյան մարգարեության կրկնակի իրականացումը

Նայենք Մաղաքիա 4:5, 6 համարների կրկնակի խոստումը. *«Ահա ես կուղարկեմ ձեզ համար Եղիա մարգարեն, Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ: Եվ նա պիտի դարձնի հայրերի սիրտը դեպի որդիները և որդիների սիրտը՝ դեպի հայրերը. որ միգուցե ես գամ և երկիրը զարկեմ անեծքով» (Մաղաք.4:5,6)*: Հովհաննես Մկրտչի ծառայության միջոցով իրականացավ խոստումի այս հատվածը՝ «*Պիտի դարձնի հայրերի սիրտը դեպի որդիները»*: Հենց այդ էլ հրեշտակն ասաց նրա հորը՝ Զաքարիային. *«Եվ Իսրայելի որդիներից շատերին իրենց Տեր Աստծո կողմը կդարձնի: Ինքն էլ Եղիայի հոգով ու զորությամբ նրա առաջից կգա, որպեսզի հայրերի սրտերը որդիներին դարձնի, անհնազանդներին՝ արդարների իմաստության, որպեսզի Տիրոջ համար պատրաստ ժողովուրդ կազմի»* (Ղուկաս 1:16, 17):

Մաղաքիա 4-րդ գլխի խոստման երկրորդ հատվածը՝ *«որդիների սիրտը կդարձնի դեպի հայրերը»*, իրականանում է հիմա, պատգամի

միջոցով, Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստից առաջ: Աստվածային լիազորության նպատակը եղել է ու մնում է սա՝ Տիրոջ համար բարեկարգ ժողովուրդ պատրաստելը:

Հին Կտակարանի շատ մարգարեություններ իրականանում են երկու տարբեր ժամանակներում: Եսայի 61:1-3 համարներում գրված է այս հայտնի խոսքը. *«Տեր Եհովայի Հոգին ինձ վրա է, ըստ որում Տերը օծել է ինձ. նա ուղարկել է ինձ աղքատներին ավետիք տալու...»*: Ղուկաս 4:18,19 համարներում Հիսուսը կարդաց այս հատվածը և կանգ առավ երկրորդ համարի կեսին, որտեղ գրված է՝ *«Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»*: Նա չկարդաց երկրորդ հատվածը, որտեղ խոսվում է «վրեժխնդրության օրվա մասին», որովհետև դա Փրկության օրվա սկիզբն էր: Այդ ժամանակ Նա չէր կարող ասել. *«Այս գրքում գրվածն այսօր կատարվեց, որ ձեր ականջներով լսեցիք»* (h. 21):

Հովել 2:28-32 համարներում ունենք փառավոր խոստումը՝ *«Եվ պիտի լինի սրանից հետո որ Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա...»*, որից հետո խոսվում է Տիրոջ օրվա մասին՝ «մեծ և ահեղ» օրվա, երբ արևը խավարելու է, իսկ լուսինը՝ արյուն դառնալու: Հենց հաջորդ համարում գրված է. *«Եվ պիտի լինի, որ ամեն ով որ կանչի Տիրոջ անունը, կփրկվի, որովհետև Սիոն սարի վրա և Երուսաղեմում փրկություն կլինի* ... »:

Պենտեկոստեի օրը իր առաջին քարոզի ժամանակ Պետրոս առաքյալը վկայակոչեց Հովել 2-րդ գլխում գրված խոստումը և բարձրաձայն հայտարարեց. «*Ամեն ով որ կանչի Տիրոջ անունը, կփրկվի*»: Նա կանգ է առնում համարի կեսին և չի հիշատակում այն հատվածը, որտեղ խոսվում է այն փրկության մասին, որը լինելու է Սիոն սարի վրա և Երուսաղեմում: Այդ խոստումը կիրականանա Իսրայելի ցեղերի համար (Եսայի 10:12, Հովել 3: 15-17, Միքիա 4:6,7), մինչև վերջապես 144 000 հոգին հայտնվեն Սիոն սարի վրա (Հայտն. 14):

Պետրոսը մեկ ուրիշ բան էլ արեց. նա «մեծ և ահեղ» օրը փոխեց «երևելի օրվա». *«... Տիրոջ մեծ և երևելի օրը դեռ չեկած»* (Գործք 2:20): (Որոշ թարգմանություններում՝ «փառավոր օր»): Իրոք, հավատացյալների համար դա փառավոր օր կլինի: Պողոսը գրում է, որ Տերն Իր գործը կավարտի մինչև Հիսուս Քրիստոսի օրը (Փիլիպ. 1:6, 1:10): Այնուհետև գրում է, որ այսուհետև մնում է իրեն պսակը, ինչպես նաև նրանց, ովքեր սիրեցին Տիրոջ հայտնվելը (2 Տիմոթեոս 4:8): Այսպիսով, այդ օրը հավատացյալների համար Քրիստոսի փառավոր օրն է, իրենց հավատքի նպատակը, հափշտակության օրը. *«Կյանքի Խոսքն ամուր պահելով, որպեսզի ես ուրախանամ Քրիստոսի օրը, որ իզուր չեմ վազել, ոչ էլ իզուր եմ աշխատել»* (Փիլիպ. 2:16): Մյուսների համար դա ահեղ օր է, թոնիր պես վառվող (2 Պետրոս 3):

Հիմա՝ վերջին ժամանակներում, ծաղրողներն ասում են. *«Ու՞ր է նրա գալստյան խոստումը...»*: Ահա պատասխանը. *«Տերը խոստումը չի*

ուշացնի...» (հ. 9): Նա համբերում է, մինչև վերջիններն էլ փրկվեն և ներս մտնեն: Պետրոսը խոսում է խոստացված վերադարձի մասին և միաժամանակ «Տիրոջ օրվա» մասին. *« Բայց Տիրոջ օրը գիշերվա գողի պես կգա. այն ժամանակ երկինքը շառաչյունով կանցնի, և տարրերը կրակով վառված կհալվեն, և աշխարհն ու նրա վրա եղած բաներն էլ կայրվեն»*, և ավարտում է այս հորդորական խոսքով. *«Ուստի, սիրելիներ, դուք, որ սպասում եք այս բաներին, ջանացեք, որ Նա ձեզ խաղաղության մեջ գտնի՝ անբիծ ու անարատ» (*2 Պետր. 3:10, 14): Հարս-Եկեղեցու համար փառավոր օր է, որովհետև մտնելու է հարսանիքի ընթրիքին:

Միայն Սուրբ Հոգին է առաջնորդում ողջ ճշմարտությանը

Ոչ մի մարգարեական խոսք չի կարող հատուկ մեկնություն ունենալ, բայց կարող է կրկնակի իրականացում ունենալ: Օրինակ, Բրանհամ եղբայրը 150 անգամ հիշատակեց Զաքարիա 14:7 համարը. *«Իրիկվա ժամանակին լույս կլինի...»*: Մինչդեռ դրա իսկական իրականացումը կլինի, երբ Տերը հայտնվի Ձիթենյաց սարի վրա և սկսի իշխել ողջ երկրի վրա (Զաքարիա 14:4-9):

Բրանհամ եղբայրը յոթանասուն անգամ վկայակոչեց Հայտնության 10-րդ գլխում գրվածը՝ այն կապելով իր՝ որպես յոթերորդ պատգամաբերի, ծառայության հետ: Բայց դա չեղյալ չի անում այն, ինչ կատարվելու է, երբ հնչի յոթերորդ հրեշտակի փողի ձայնը Հայտն.11:15 համարի համաձայն, որը կանխասվել էր Հայտն. 10:7 համարում: Այդ ժամանակ Աստծո խորհուրդը կկատարվի նույնքան հաստատ կերպով, ինչպես Բրանհամ եղբոր ծառայության միջոցով բացահայտվեցին և կատարվեցին Աստծո բոլոր խորհուրդները Ծննդոցից մինչև Հայտնություն: Բայց հատկապես նրանք, ովքեր հետաքրքրված են յոթ որոտներով, պետք է ուշադրություն դարձնեն Հայտն. 10:6 համարում գրված երդմանը և հայացք գցեն Դանիել 12:6 համարում գրվածին: Ահա հարցը. *«Մինչև ե՞րբ է այս սքանչելյաց վերջը»*: Դրան հետևում է կարևոր հայտարարությունը. «*Եվ ես լսեցի, որ այն կտավ հագած մարդը, որ գետի ջրերից վեր էր, իր աջ և ձախ ձեռքը բարձրացրեց դեպի երկինք և երդում արեց հավիտյանս կենդանի եղողով, թե մի ժամանակ, ժամանակներ և կես. և երբ վերջանա սուրբ ժողովրդի ձեռքի փշրվելը, այս ամենը պիտի կատարվի»* (հ.,7): Ամեն:

«...և երդվեց հավիտյանս հավիտենից Կենդանի եղողով, որ ստեղծեց երկինքն ու ինչ որ նրանում է, և երկիրն ու ինչ որ նրանում է, և ծովն ու ինչ որ նրանում է,, թե այլևս ժամանակ չի լինելու» (Հայտն. 10:6):Ամեն:

Գոհություն Աստծուն մարգարեական խոսքի այս բացահայտող հատվածի համար. այն պահից, երբ հրեշտակը երդվում է, մնում է երեք ու կես տարի մինչև այն ժամանակը, երբ Տերը կսկսի թագավորել Իր

թագավորությունում (Դանիել 7:25-27, Հայտն. 11:15-19): Դանիելի տեսած և լսած երդումը որքան ճշգրիտ կերպով է համապատասխանում Հայտնության 10-րդ գլխի իրադարձություններին, որոնք տեսավ Հովհաննեսը: Գոհություն Աստծուն գրված, բացահայտված, երկու-երեք վկաների խոսքով հաստատված Իր հրաշալի խոսքի համար:

Ո՞վ կհամարձակվի ժխտել, որ Հայտն. 10-րդ գլխում գրվածը կիրականանա հենց այն նույն հերթականությամբ, որով գրված է: Ուխտի Հրեշտակը իջնում է երկնքից՝ ամպ հագած և գլխին՝ ծիածան, ձեռքում բացված գրքույկ պահած: Նա աջ ոտքը դնում է ծովի վրա, ձախը՝ ցամաքի. *«..առյուծի պես է գոչելու նա...»* (Ովսե 11:10, Հովել 3:15-17): 1963 թվականի մարտի 17-ին Բրանհամ եղբայրն ասաց. «Եթե նկատել եք, դա Քրիստոսն է: Հին Կտակարանում Նա կոչվում էր Ուխտի Հրեշտակ, հիմա Նա ուղիղ գնում է հրեաների մոտ...»:

1963 թվականի փետրվարի 28-ին, երբ նա ունեցավ գերբնական ամպի հայտնության հետ կապված այն զորավոր փորձառությունը ու ամպի մեջ տեսավ բուրգի տեսքով կանգնած յոթ հրեշտակներին, Սանսեթ լեռան ողջ շրջակայքը ցնցվեց բնական երկրաշարժից, որին հետևեցին որոտի յոթ լսելի ձայներ: Բրանհամ եղբայրը հիսուն անգամ հիշատակել է այդ որոտները: Դրանք մեծ նշանակություն ունեին իր համար, որովհետև այդ յոթ որոտները նրա ուշադրությունն ուղղեցին գերբնական ամպի վրա, մինչև Կնիքների մասին քարոզելը: Նա այդ մասին բազմիցս խոսել է, և մենք էլ արդեն շատ անգամ գրել ենք այդ մասին:

1963 թվականի մարտի 24-ին նա հարվածեց ամբիոնին՝ շեշտելու համար յոթ որոտների ուժգնությունը: Ես գնացի այնտեղ մի խումբ քարոզիչների հետ, որոնց հրավիրել էր Փիրի Գրինը և անձամբ տեսա սարից գլորված ժայռաբեկորներն ու քարերը: Բայց դրանից հետո վկայակոչելով Հայտնության 10-րդ գլուխը՝ Բրանհամ եղբայրն ասաց. **«Որքան որ հաստատ է, որ ոչ ոք չգիտի Տիրոջ գալստյան օրը, նույնքան հաստատ է, որ ոչ ոք չի իմանա, թե ինչ են ասել յոթ որոտները»**: Դա Եկեղեցուն չի վերաբերում, և դրա վերաբերյալ ոչինչ չպիտի գրվի: **Այն, ինչ ասվում է Եկեղեցուն և հափշտակության հավատք է առաջացնում, գրված է Աստվածաշնչում և հաղորդվել է մեզ**:

Նրանք, ովքեր ժխտում են գրված Խոսքը և խոսում են «յոթ որոտների հայտնության» մասին (ի դեպ դրա վերաբերյալ զանազան տարբերակներ կան, որոնցից մեկն ասում է, որ դրանք յոթ առանձնահատուկ մարդիկ են, որոնք հայտնվելու են որպես յոթ ձայներ կամ՝ Ուխտի Հրեշտակն արդեն երկրի վրա է), այդպիսի քարոզիչները խաբված են մոլորության հոգուց:

Վեցերորդ կնիքով սկսվում է Տիրոջ օրը: Արևը խավարում է, լուսինը արյան պես դառնում և երկնքից թափվում են աստղերը: Այն ամենը ինչ գրված է Հայտն. 6:12 համարից սկսած, վերաբերում է ապագային:

Ամպի հայտնվելը

Դժբախտաբար, արդեն տարիներ շարունակ նույնիսկ պատգամի շրջանակներում կասկածի են ենթարկում այն, որ գերբնական ամպը և յոթ հրեշտակների համաստեղությունը հայտնվել է փետրվարի 28-ին: Դա ինձ մեծ ցավ է պատճառում: Բերում են այս փաստարկը՝ որսաշրջանը Արիզոնայում սկսվում է մարտի 1-ին, ուստի դա չէր կարող տեղի ունեցած լինել փետրվարի 28-ին: Այժմ քննադատներն էլ վերցրին այդ թեման, տարածեցին համացանցում ընդհուպ մինչև այսպիսի վերնագիր գրելը՝ Ուիլյամ Բրանհամը ստախոս է:

SCIENCE
AMERICAN ASSOCIATION FOR THE ADVANCEMENT

Stratospheric Cloud over Northern Arizona

Abstract. *An unusual ring-shaped cloud was widely observed over northern Arizona near sunset on 28 February 1963.*

LIFE

MAY 17 · 1963

...And a High Cloud Ring of Mystery

Hovering like a giant's smoke ring, a great cloud appeared at sunset over Flagstaff, Ariz. last Feb. 28 and set off a continuing scientific mystery. Watchers struck by the cloud's


THE ARIZONA REPUBLIC
Sunday
MARCH 26, 1967

Shortly before sunset Feb. 28, 1963, a strikingly beautiful and mysterious cloud swept northward across Arizona.

Ամսագրերում՝ «Սայընս» (Science) ամսագիր, 1963 թ ապրիլի 19

«Մատանու տեսքով մի արտասովոր ամպ է դիտվել հենց մայրամուտից առաջ, Արիզոնայի հյուսիսում 1963 թվականի ֆետրվարի 28-ին»:

«Լայֆ» (Life) ամսագիր, 1963 թ. մայիսի 17

«Հսկայական ծխանման օղակի պես մի ամպ է հայտնվել մայրամուտի ժամանակ Ֆլագսթաֆի վերևում, Արիզոնայում փետրվարի 28-ին»:

«The Arizona Republic», 1967 թ. մարտի 26

«Հենց մայրամուտից առաջ, փետրվարի 28-ին ապշեցուցիչ գեղեցկությամբ



մի խորհրդավոր ամպ անցավ Արիզոնայի վրայով, հյուսիսի ուղղությամբ»:

Բրանհամ եղբայրը հաճախ է վկայակոչել այս հոդվածները, հատկապես «Լայֆ» ամսագրում գրվածը: Նա ոչ առարկություն արեց ամսաթվի վերաբերյալ, ոչ էլ երբևէ խոսել է ամպի հետ կապված երկու տարբեր ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Ամեն անգամ նա վկայել է ամպի հայտնվելու մասին, որի մեջ յոթ հրեշտակներ էին գտնվում, որպես մեկ իրադարձության:

Ես չեմ մասնակցում այդ անիմաստ վիճաբանություններին, բայց Աստծո առաջ ունեցած իմ պատասխանատվության համար <u>ես պարտավոր եմ ներկայացնել այս երեք հոդվածները, որոնք հաստատում են 1963 թվականի փետրվարի 28 ամսաթիվը</u>:

Քննադատները խոսք են վերցնում

Բոլոր ժամանակներում քննադատներ են հայտնվել: Նրանք գտել են 13 մեջբերումներ, որոնք Բրանհամ եղբայրն ասել է 1961 թվականի հուլիսին և օգոստոսին երեք քարոզների ժամանակ 1977 թվականի հետ կապված: Նա բազմիցս հիշատակել է 1977 թվականը իր քարոզներում և համոզված էր, որ հափշտակությունը և այն բոլոր տեսիլքները, որոնք նա տեսել է 1933 թվականին, կիրականանան մինչև 1977 թվականը: Դա նրա սպասելիքն էր, այլ ոչ թե ԱՅՍՊԵՍ է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքը: Նա դոկտոր Լարկինի գրքում կարդացել էր, որ 1977 թվականը լինելու էր յոթանասուներորդ հոբելյանական տարին:

Քննադատները ուրիշ խոսքեր էլ են գտել, որոնք հիմա չենք քննարկի: Բրանհամ եղբայրը, որպես մարդ, ուներ ակնկալիքներ. դա իր իրավունքն է, բայց եթե որոշ բաներ ասել է իր մտքով, փաստ է այն, որ նա ճշմարիտ մարգարե էր, որի գերբնական, անսխալ ծառայությունը մեծ կարևորություն է ունեցել փրկության պատմության մեջ: Մենք ուշադրություն չենք դարձնում քննադատների խոսքերին, ոչ էլ այն ամենին, ինչ

մոլորության հոգին բերում է պատգամի շուկա, այլ ուրախանում ենք այն ամենի համար, ինչ Աստված բացահայտել է Իր օրհնյալ մարգարեի միջոցով:

Բրանհամ եղբայրը հատուկ սպասելիքներ ուներ նաև Կնիքների հետ կապված: 1956 թվականից մինչև վերջ նա խոսել է վրանի տեսիլքի մասին և 55 անգամ խոսել է «երրորդ փուլի» մասին: 1965 թվականի նոյեմբերի 28-ին նաև ասել է. «Ես նորից կանցնեմ այս ճանապարհով»: Մինչդեռ Թուսոնից Ջեֆֆերսոնվիլ տանող ճանապարհին, 1965 թվականի դեկտեմբերի 18-ին տեղի ունեցավ վթարը, որի ժամանակ նա ծանր վերքեր ստացավ և 1965 թվականի դեկտեմբերի 24-ին կանչվեց տուն: Աստված Իր ուղարկած պատգամաբերներին վերցնում է միայն այն ժամանակ, երբ նրանց ծառայությունն արդեն ավարտված է: Հովհաննես Մկրտչի կյանքն ու ծառայությունը նույնպես հանկարծակի ավարտվեցին: Մինչդեռ գոնե մի քիչ Աստծո վախն ունեցողը չի մերժի Բրանհամ եղբոր ծառայությունը նրա համար, որ նա արտահայտել է իր ակնկալիքները: Նրա ծառայությունը անմեղադրելի էր: Քանի անգամ է նա խոսել Կրակի սյան, Ամպի, գերբնական Լույսի մասին, որն իջնում էր հատկապես այն ժամանակ, երբ նա աղոթում էր հիվանդների համար: Դրա հետ կապված՝ նա 112 անգամ հիշատակել է Տիրոջ Հրեշտակին և Ուխտի Հրեշտակին: Դրան մենք ասում ենք՝ ալելուիա, ամեն: Նա, ով գերբնական ձևով իջնում էր, երբ եկեղեցու յոթերորդ պատգամաբերը երկրի վրա էր և պատգամ էր բերում, Հայտնության 10-րդ գլխում կիջնի տեսանելի ձևով որպես Ուխտի Հրեշտակ և այդ ժամանակ կիրականանա Մաղաքիա 3:1 համարում գրվածի երկրորդ մասը՝ *«հանկարծակի է գալու իր տաճարի մոտ ... ուխտի հրեշտակը...»*: Այս ամենը կատարվելու է այնպես, ինչպես կանխասվել է աստվածաշնչյան մարգարեություններում, և մենք պետք է ամեն բան դասավորենք Սուրբ Գրքի համաձայն:

Մարգարեները մնում են մարգարե, եթե նույնիսկ Աստված թույլ է տալիս, որ նրանք իրենց կարծիքն ասեն կամ ինչ-որ բանի հույս ունենան: Դա նրա համար է, որ մենք զգաստ մնանք: Դրանով հասկանում ենք, որ նրանք էլ ուրիշ մարդկանց նման մարդ են, և փառքը պատկանում է միայն Աստծուն, ով միայն անմահ է և անսխալ և տալիս է կոչումներ, որոնք երբեք հետ չի վերցնում:

Աստվածապաշտություն թե՞ կռապաշտություն

Ի հակադրություն քննադատների, որոնք կասկածի են ենթարկում Բրանհամ եղբոր կյանքում ու ծառայության մեջ եղած գերբնական բաները, ֆանատիկ հետևորդները նրան համարում են ավելին քան մարդ:

1966 թվականի ապրիլի 12-ին և 13-ին, մարգարեի թաղումից հետո, որը տեղի էր ունեցել ապրիլի 11-ին, ես խնդրեցի Ջեֆֆերսոնվիլի

եղբայրներին տպագրել ձայներիզների վրա ձայնագրված քարոզները՝ թարգմանելու համար այլ լեզուներով: Դա կատարվում էր «Spoken Word Publications» անվանումով. հայերենում՝ «Ասված Խոսք»: Ռոյ Բորդըրսը, որին անձամբ ճանաչում էի և ով եղել է Բրանհամ եղբոր գործավարը, ստանձնեց այդ պատասխանատվությունը: Նյու Յորքից, Թուսոնից և Թեքսասից եկած բոլոր մյուս եղբայրները հիասթափված վերադարձան տուն, որովհետև հարությունը, որին նրանք սպասում էին այդ Զատկի կիրակին, տեղի չունեցավ:

«Ասված Խոսքը» անվանումը մնաց մինչև ութսունական թվականների սկիզբը: Հետո սկսեցին բացահայտ կերպով աստվածացնել մարգարեին, և Հայտն. 10:7 համարի ձայնը դարձավ «Voice of God»՝ Աստծո ձայն: Դրանից հետո մարգարեի ասած ամեն խոսքը համարում էին Աստծո Խոսք, եթե նույնիսկ նա ասում էր «աաա»: Այդպես էլ պետք է տպագրեին ու թարգմանեին: Այսուհետև նրա պատմած բոլոր պատմությունները համարում էին Աստծո Խոսք, և այդպես սկսվեց մարդու պաշտամունքը: Բրանհամ եղբորն անվանեցին «Աստծո ձայն» և նրա բոլոր ասածները համարում էին Աստծո Խոսք: Դա անում էին վկայակոչելով 1 Կորնթ. 7-րդ գլուխը, որտեղ Պողոսը հայտնում է թե իր կարծիքը, թե Տիրոջ ասածը. *«Բայց ամուսնացածներին պատվիրում եմ, ոչ թե ես, այլ Տերը... բայց ուրիշներին ես եմ ասում և ոչ թե Տերը...»*: Թեև Պողոսը ցույց է տալիս Տիրոջ ասածի և իր ասածի միջև տարբերությունը, այն ժամանակվանից երկուսն էլ պետք է համարվեին Աստծո Խոսք: Պողոսը պարզապես խորհուրդ էր տալիս՝ հաշվի առնելով այն ժամանակվա նեղությունները (հ. 26) և նույնիսկ գրեց. *«Բայց սա եմ ասում ձեզ, եղբայրներ, ժամանակը կարճ է, մնում է, որ կին ունեցողը չունեցողի պես լինի»* (հ.29):

Ուիլյամ Բրանհամը միայն մարգարե չէր, նաև մարդ էր ուրիշների նման: Ես տասը տարի անձամբ շփվել եմ իր հետ, հեռախոսով խոսել եմ իր հետ Կրեֆելդից, իր մեքենայի մեջ եմ եղել, երբ նա ղեկին էր, կերել ու խմել եմ իր հետ, իր անմեղադրելի ծառայության ականատես ու վկա եմ եղել թե Եվրոպայում թե Միացյալ Նահանգներում: Նաև պահել եմ Բրանհամ եղբոր 21 նամակները, որոնցից առաջինը գրվել է 1958 թվականի նոյեմբերի 11-ին, իսկ վերջինը՝ 1965 թվականի սեպտեմբերի 30-ին: Եվ ինչպես հաճախ գրել եմ, իմ ծառայությունը կապված է եղել իր ծառայության հետ այնպես, ինչպես ոչ մի այլ ծառայություն երկրի վրա: Մինչև այսօր ոչ մի եղբայր չի վկայել ուղղակի կանչման մասին՝ նշելով օրն ու ժամը, վայրն ու պահը, կամ առանձնահատուկ հանձնարարությունը, ինչպես եղավ իմ դեպքում, որն էլ մարգարեն երկու վկաների ներկայությամբ հաստատեց 1962 թվականի դեկտեմբերի 3-ին: Հենց իր խնդրանքով ես քարոզել եմ Ջեֆֆերսոնվիլի իր խորանում դեկտեմբերի 2-ին, կիրակի առավոտյան և երեկոյան:

Մինչդեռ եթե հավաքույթի ժամանակ ներածական խոսքից հետո Աստվածաշունչը մի կողմ են դնում և սկսում են և միայն քարոզներից վերցված մեջբերումներ կարդալ, որոնք հարմարեցնում են իրենց սեփական գաղափաներին, ես չեմ կարող և իրավունք չունեմ լռելու դրա վերաբերյալ: Եթե պատգամի շրջանակներում միայն խոսում են Բրանհամի մասին և միշտ ասում են. «Մարգարեն ասել է, մարգարեն ասել է...», երբ հրատարակվում են հատորներ նրա կյանքի պատմություններով, գրքեր նրա տված հարցազրույցներով և մինչև 340 նկար պարունակող լուսանկարների ալբոմներ, դա մարդու պաշտամունք է: Երբ գերեզմանը դառնում է ուխտագնացության վայր, և նրա անձնական իրերով հատուկ սենյակները՝ մասունքներ, դա կռապաշտություն է: Ես դա ասում եմ Աստծո առաջ լիակատար պատասխանատվությամբ:

Այսօր եթե լսեք Նրա ձայնը...

Շատ «պատգամի հավատացյալներ» խոսում են միայն այն բաների մասին, ինչ կատարվել է մարգարեի ժամանակներում, բայց ոչ երբեք այն գործերի մասին, որոնք Աստված անում է հիմա: Դա մոլորեցնում է Աստծո ժողովրդին: Անցյալում Աստծո արած գործերը նախապատրաստական աշխատանք են հանդիսացել ներկայում կատարած Նրա գործերի համար:

Բոլոր նրանք, ովքեր չեն հավատում, որ Բրանհամ եղբոր ծառայությունից հետո շարունակություն կա, որը հասցնելու է ավարտին, արհամարհանքով անցնում են դրա կողքով: Նրանց է ուղղված այս Խոսքը. *«Տեսեք, անարգողներ և զարմացեք և կործանվեք, <u>քանի որ Ես ձեր օրերում մի գործ եմ կատարում</u>, մի գործ, որի մասին, եթե մեկը ձեզ ասեր, երբեք չպիտի հավատայիք»* (Գործք 13:41):

Քանի անգամ է Բրանհամ եղբայրը խոսել այդ մասին. «Մարդիկ խոսում են այն բաների մասին, ինչ Աստված արել է, սպասում են այն բաներին, ինչ Նա անելու է, բայց չեն նկատում այն, ինչ Նա անում է հիմա»:

Դրան ավելանում է այն ուսմունքը, թե մարգարեն վերադառնալու է և շարունակելու է իր ծառայությունը վրանի տակ: Միայն նրանք ովքեր ճանաչում են Աստծո գործի շարունակությունը՝ ընդունելով այն, ինչ Նա անում է հիմա, իրոք ճանաչում են այն, ինչ Նա արել է անցյալում և կտեսնեն, թե ինչպես է Տերը վեր կենում և ավարտում Իր փրկագնման գործը, ինչպես ավարտեց արարչության գործը:

«Որովհետև ինչպես Փարաոհ սարի վրա՝ վեր է կենալու Տերը և բարկանալու է, ինչպես Գաբավոնի ձորում, որ գործի Իր գործը՝ Իր օտարոտի գործը, և կատարի իր պաշտոնը՝ Իր տարօրինակ պաշտոնը» (Ես.28:21):

«Որովհետև այսպես է ասում Զորաց Տերը. մեկ անգամ էլ, մի քիչ հետո կշարժեմ երկինքն ու երկիրը, և ծովն ու ցամաքը» (Անգե 2:6):

«Որի ձայնը այն ժամանակ երկիրը շարժեց, իսկ հիմա խոստացել է, ասելով. «Մեկ անգամ ևս պիտի շարժեմ ոչ միայն երկիրը, այլ նաև երկինքը» (Եբր. 12:25):

Գոհություն Աստծուն մեր ժամանակների համար խոստացված մարգարեի կանչման և հանձնարարության համար: Այն, ինչ մեր Տերն ասաց Մատթ. 10:40, 41 համարներում միշտ ուժի մեջ է. *«Ով որ ձեզ ընդունում է, ինձ է ընդունում, և ով որ ինձ ընդունում է, ինձ ուղարկողին է ընդունում: Ով որ մարգարեի անունով է մարգարե ընդունում, նա մարգարեի վարձ կստանա, և ով որ արդարի անունով է արդար ընդունում, արդարի վարձ կստանա»*: Մեր սրտերը դարձել են առաքյալների և մարգարեների իսկական հավատքին: Ամեն: Քրիստոսի Հարսը կլինի մաքուր Հարս-Խոսք, ինչպես Փեսան էր մարմին դարձած Խոսքը: Բրան-համ եղբայրը տեսավ, որ Հարսը ժամանակավոր դուրս եկավ շարքից և շատ ամոթալի կերպով վարվեց, բայց հետո վերադարձավ շարք: Դա կատարվում է բոլոր նրանց հետո, ովքեր լիովին ենթարկվում են Քրիստոսին՝ Եկեղեցու Գլխին:

«Նրան տրվեց, որ սպիտակ, մաքուր և լուսափայլ բեհեզ հագնի (որովհետև բեհեզը սրբերի արդարությունն է)» (Հայտն. 19:8):

«...պատրաստները նրա հետ հարսանիքի խնջույքի մտան. դուռն էլ փակվեց» (Մատթ. 25:10):

Հիմա է փրկության պատմության ամենակարևոր ժամանակաշրջանը

Այժմ կարևորն այն է, որ մասնակցենք այն գործին, որն Աստված հիմա է անում և ամեն բան ճիշտ հասկանանք (Մատթ. 13:51): Ամենակարևորն այն է, որ Հին Կտակարանի աստվածաշնչյան մարգարեությունները ճիշտ միացնենք Նոր Կտակարանում դրանց իրականացման հետ: Նոր Կտակարանում Հին Կտակարանի 800 մեջբերում կա, որոնցից 186-ը Սաղմոսաց գրքից են: Մեր Տիրոջ ասած 52 առակներից քառասունը վերաբերում են Աստծո թագավորությանը: Դրանցից յոթը գրված են Մատթ. 13-րդ գլխում: Նա հարցրեց Իր աշակերտներին. *«Այս բոլոր բաները հասկացա՞ք»: Ասացին Նրան. «Այո, Տեր»*: Նրանց է վերաբերում այս երանության խոսքը. *«Բայց երանելի են ձեր աչքերը, որ տեսնում են, և ձեր ականջները, որ լսում են: Որովհետև ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շատ մարգարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ տեսնում եք, բայց չտեսան, և լսել, ինչ որ լսում եք, բայց չլսեցին»*: Ինչպես եղել է Քրիստոսի առաջին գալստի ժամանակ, այնպես էլ հիմա է՝ Նրա երկրորդ գալստից առաջ: *«Եվ ասաց նրանց. «Սրանք այն խոսքերն են, որ նախապես ձեզ ասացի, երբ ձեզ հետ էի, <u>թե պետք է, որ կատարվի այն ամենը,</u> ինչ գրված է Իմ մասին Մովսեսի օրենքում, մարգարեներում ու սաղմոսներում»*

(Ղուկաս 24:44): Նույն կերպ, այն ամենը, ինչ խոստացվել է Եկեղեցուն, պիտի կատարվի: Երանի այն աչքերին, որոնք տեսնում են, այն ականջներին, որոնք լսում են, այն սրտերին, որոնք հավատում են: Ամեն:

Վերջին ժամանակների իրադարձությունները Մերձավոր Արևելքում՝ աստվածաշնչյան մարգարեության լույսի տակ

Իսրայելի և Վատիկանի միջև քսան տարվա բանակցություններից հետո, Սիոն լեռան վրա գտնվող սրահը, որտեղ տեղի է ունեցել վերջին Ընթրիքը և Սուրբ Հոգու հեղումը, այսուհետ պետք է հանձնվի կաթոլիկների ֆրանցիսկյան ուխտին: 1948 թվականից այն Իսրայելի պետության ղեկավարության տակ էր և համարվում էր թանգարան, որում ոչ մի կրոնական արարողություն իրավունք չունեին կատարելու: Հետագայում կաթոլիկ եկեղեցին ուզում է նույնիսկ այնտեղ պատարագ անել:

Մուսուլմաններն իշխում են տաճարի լեռան վրա, որտեղ գտնվում են Ալ-Աքսա մզկիթը և Ժայռի Գմբեթը, իսկ ֆրանցիսկյան Ուխտը, հետևաբար՝ կաթոլիկ եկեղեցին, հափշտակում է Սիոն լեռը, բայց փառք Աստծուն, ժամանակավորապես: Այժմ վերջին նորություններում պաշտոնապես գրում են այն բաների մասին, որոնք գրված են Սուրբ Գրքում: Լինի դա քաղաքական, կրոնական, թե տնտեսական ոլորտներում, բոլորը ցանկանում են մասնակցել Իսրայելի և Երուսաղեմի վերաբերյալ որոշումներին, թեև գագաթնակետը Վատիկանի հետ բանակցություններն են:

Հետևելով Պողոսի կողմից մարգարեական ձևով կանխասված խաղաղությունն ու ապահովությունը շատ մոտ են. *«Որովհետև երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ նրանց վրա կորուստը կհասնի, ինչպես ցավը՝ հղիի վրա, ու նրանք չեն ազատվի»* (1 Թես.5:3):

Նախ կանխասվել է, որ վերջին համաշխարհային տիրակալը, որի մեջ միավորված են համաշխարհային քաղաքական և կրոնական իշխա-

նությունները, հաճելի խոսքերով հաջողության է հասնելու և Իսրայելին տանելու է կորստի: *«Եվ կզորանա նրա իշխանությունը, բայց ոչ թե նրա զորությամբ, և սքանչելիքներով պիտի ավերի և հաջողի ու կատարի, և պիտի փչացնի զորավորներին և սրբերի ժողովուրդը: Եվ նրա խելքով պիտի հաջողվի խաբեությունը նրա ձեռքով և նա իր սրտում պիտի հպարտանա և խաղաղության մեջ շատերին պիտի կորցնի, և վեր պիտի կենա իշխանաց Իշխանի դեմ, բայց առանց ձեռքի պիտի կոտրվի»* (Դանիել 8:24,25): Այս երկուսը ընթանում են զուգահեռ՝ կրոնական բնույթի խաղաղության բանակցությունները և ռազմական բախումները: Իսրայելին կճնշեն բոլոր կողմերից: Դանիել մարգարեն մարգարեացել է. *«...եկող ժողովրդի իշխանը պիտի փչացնի քաղաքը և սրբարանը և նրա վերջը իբր թե հեղեղով կլինի, և մինչև պատերազմի վերջը ավերումներ են որոշված»* (Դանիել 9:26):

Այնուամենայնիվ Հիսուս Քրիստոսն է ասելու վերջին խոսքը և հաստատելու է Իր Ուխտը Իր Իսրայել ժողովրդի հետ: Այն ժամանակ կկատարվի Հովել 3:16-ում համարում գրվածը. *«Եվ Տերը պիտի գոչի Սիոնից և Երուսաղեմից ձայն պիտի տա, և երկինքն ու երկիրը պիտի դողան, բայց Տերը ապավեն կլինի իր ժողովրդի համար, և ամրոց՝ Իսրայելի որդիների համար»*:

Չնայած կողմնակի երևույթներին՝ Իսրայելի հետ պայմանագիրը և Եկեղեցու հափշտակությունը շատ մոտ են, և մեր Տերն ու Փրկիչը համառորեն ասում է մեզ. *«Այդպես էլ դուք. երբ այս ամենը տեսնեք, իմացեք, որ մոտ է»*: Մենք դա տեսնում ենք, լսում ենք, գիտենք: Եկել է պահը. հեթանոսների համար Շնորհքի ժամանակաշրջանը ավարտին է մոտենում, և Տիրոջ գալուստը շատ, շատ մոտ է:

Երանի այն աչքերին, որոնք տեսնում են, այն ականջներին, որոնք լսում են, երանի նրանց, ովքեր պատրաստ են հափշտակվելու Գառան հարսանիքի ընթրիքին մասնակցելու համար: 1981 թվականին հավատարիմ Տերը ինձ թույլ տվեց տեսնել և ապրել հափշտակությունը: Իրականություն են դառնալու այս ամենը՝ հարությունը, մեր մարմինների փոխվելը, հափշտակությունը, հարսանյաց Ընթրիքը: *«Ինչ որ աչքը չտեսավ, ու ականջը չլսեց ու մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար»* (1 Կորնթ.2:9):

Հոգին ու Հարսն ասում են. «Եկ»:

Գործելով Աստծո հանձնարարությամբ՝

Էվալդ Ֆրանկ

2013 թվականի հուլիսի 7-ին մեր եղբայրները՝ Միսկիսը և Համեստուկը արեցին այս օդային լուսանկարը: Նրանցից մեկը օդաչու է, մյուսը՝ լուսանկարիչ:

Կարող ենք միայն շնորհակալություն հայտնել: Հենց սկզբից Ամենակարող Աստված ամեն բանի մասին հոգ տարավ: Հավաքույթների համար նախատեսված այս հասարակ շենքի բացումը տեղի ունեցավ 1974 թվականի Զատկին: Յոթանասունական թվականներին բոլորը Ամերիկայում սպասում էին, որ 1977 թվականին կլիներ հափշտակությունը և կգար վերջը: Բայց 1976 թվականի հուլիսի 18-ին, երեկոյան կողմ, երբ անցնում էի եկեղեցու շենքի կողքով, Տերը խոսեց ինձ հետ. «Իմ ծառա, գնա հարևան տարածքը և հանձնիր այն ինձ»:

Այսպես 1977-78 թվականներին բացվեցին երկու օժանդակ շենքերը՝ աշխատասենյակներով և հյուրերի համար ննջարաններով, հետագայում մի շենք էլ կառուցվեց տպագրության և առաքման համար:

Ամեն ինչում և ամեն բանի մասին Աստված հոգ տարավ, նաև տարբեր լեզուների և տեխնիկայի: Այստեղից ողջ աշխարհը կարող է հոգևոր կերակուր ստանալ: Գոհանում ենք Աստծուց հատկապես նրա համար, որ 1200 եկեղեցիներ և խմբեր առցանց միանում են մեզ և կարող են դիտել և տեսնել ամեն ամսվա առաջին շաբաթվա վերջում տեղի ունեցող հավաքույթները 13 լեզուներով: Մեծ է արձագանքը, որը դա բերում է 80-ից ավելի երկրներում: